Ազգ
Azg
14 ՄԱՅԻՍ 2011 ՇԱԲԱԹ 87(4706)
ISSN: 1829-1651
9 771829 165003 11087

# Դալայ Լամա. «Լադենի սպանությունը ինձ վշտացրեց»

Մինչ արեւմտյան երկրները աշխարհի «թիվ 1 ահաբեկիչ» բեն Լադենի սպանության առնչությամբ ողջունում էին նախագահ Օբամային, նրանց էր միանում նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, իսկ ՌԴ արտգործնախարար Լավրովը հայտարարում էր, որ ԱՄՆ-ը իրավունք ուներ Պակիստանում ոչնչացնելու ահաբեկչին, ահա Տիբեթի հոգեւոր առաջնորդ Դալայ Լաման մամուլի ասուլիս է կազմակերպում Նյու Յորքում:

Երեկ կազմակերպված ասուլիսում Դալայ Լաման Լադենի սպանության առնչությամբ հայտարարում է. «Ավելի շուտ ցավալի փաստ է, սպանությունն իմ կարծիքով վատ երեւույթ է: Ես ինձ վատ զգացի եւ վշտացա, ինչպես վշտացել էի Սադդամ Հուսեյնի մահապատժի ի կատար ածման ժամանակ»: Նշելով երեկ այդ մասին, «Դունիա բուլթենի» կայքէջը գրում է, որ անցյալ շաբաթ Լոս Անջելեսում այդ նույն Դալայ Լաման հայտարարել էր. «Աշխարհի թիվ մեկ ահաբեկիչը արժանի էր, որ սպանեին նրան»: Հ. Չ.

## ՀԱՄԱՌՈՏ

# ՀՀ դեսպանի պատասխան նամակը՝ Բան Կի Մունին

ՄԱԿ-ի կենտրոնակայանում տարածվել է ՀՀ մշտական ներկայացուցիչ դեսպան Կարեն Նազարյանի նամակն՝ ուղղված կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունին՝ ի պատասխան Ադրբեջանի ներկայացուցչի նախապես տարածած նամակի:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ դեսպան Նազարյանի նամակում նշվում է, որ անբարո են կեղծիքներ տարածելու եւ երեխայի կյանքը որպես քարոզչության գործիք օգտագործելու նպատակով Ադրբեջանի փորձերը: Նման փորձերի փոխարեն Ադրբեջանը պետք է հրաժարվի շփման գծում սադրանքների իր արկածախնդիր պրակտիկայից, որը լուրջ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը:

Այդ գործողությունները կոպտորեն խախտում են 1994թ. Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ստորագրված հրադադարի համաձայնությունը: Նշվում է, որ Ադրբեջանը պետք է հարգի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կոչերը՝ շփման գծից դիպուկահարներին հանելու մասին:

Հ. Ա.

# Արտագաղթի թեմայով քննարկում Գյումրիում

## *Կազմակերպել էր «Սիվիլիթաս» հիմնադրամը*

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

Մայիսի 12-ին Գյումրու «Արաքս» հյուրանոցային համալիրի դահլիճում «Սիվիլիթաս» հիմնադրամը ներկայացրեց իր տարեկան «Հայաստան-2010. անորոշության տարի» զեկույցը, որին հաջորդեց քննարկում «Արտագաղթի նոր ալիք. ինչո՞ւ են մարդիկ լքում Հայաստանը» թեմայով: Բացելով քննարկումը, հիմնադրամի վերլուծաբան **Թաթուլ Հակոբյանը** մասնավորապես նշեց, որ «Սիվիլիթաս»-ը միշտ իր պարտքն է համարում նաեւ Երեւանից դուրս կազմակերպել միջոցառումներ, հանրապետության մարզերը, քաղաքները ներառել քննարկումներում, բանավեճերում, հնարավորինս նաեւ նրանց ձայնը լսելի դարձնել Երեւանում:

Ինչպես վերջին 20-25 տարիներին, այսօր էլ, ակնհայտորեն, Հայաստանի անվտանգությանը սպառնացող իրողություններից մեկը շարունակում է մնալ արտագաղթը: «Սիվիլիթաս»-ի փորձագետների գնահատմամբ՝ եթե 90-ական թթ. սկզբներին ու կեսերին արտագաղթում էին գերազանցապես Երեւանից եւ քաղաքներից ընդհանրապես, ապա այսօր արտագաղթում են առաջին հերթին գյուղերից: Վերջին մի քանի տարիներին մասնավորապես Շիրակի մարզի բնակավայրերից, կապված նաեւ Հայաստանի այս երեք տարիների տնտեսական ցուցանիշների ու գյուղատնտեսության ավելի քան 20 տոկոս անկման, մասամբ եւ՝ Ռուսաստանի որդեգրած հայտնի միգրացիոն քաղաքականության հետ, արտագաղթը նոր թափ է առնում: Ինչո՞ւ են մարդիկ թողնում իրենց բնակավայրերը եւ հեռանում երկրից: Ինչո՞ւ են մարդիկ երես թեքում հողից՝ թողնելով անմշակ: Ինչո՞ւ է Գյումրիից մանր բիզնեսը տեղափոխվում հարեւան Վրաստան: Ինչպե՞ս պետք է կանգնեցնել արտագաղթը մարզից: Կազմակերպիչները այս եւ նման հարցեր էին առաջադրել քննարկման համար, որի հիմնական բանախոսները էին Շիրակի մրցունակության կենտրոնի գործադիր տնօրեն **Գայանե Ավագյանը,** Գյումրու «Արեւամանուկ» հիմնադրամի տնօրեն **Արմինե Գմյուր-Կարապետյանը** եւ «ԳԱԼԱ» հեռուստաընկերության լրագրող-մեկնաբան **Դերենիկ Մալխասյանը**:

Գայանե Ավագյանը, նախ անդրադառնալով արտագաղթի պատճառներից մեկը հանդիսացող տնտեսական ճգնաժամի հետեւանքներին, նկատեց, որ դրանք մարզում այսօր ավելի սուր են զգացվում: Ասվածի արտահայտությունը նա համարեց առկա ֆինանսական դժվարությունները գրեթե բոլոր գործարարների մոտ: Ըստ բանախոսի՝ չնայած բանկերը սկսել են ավելի ակտիվ աշխատել, տրամադրում են ավելի շատ ֆինանսական միջոցներ, սակայն գործարարներից շատ քչերն են կարողանում օգտվել դրանցից: Որովհետեւ նախ բարձրացել են տոկոսադրույքները՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման եւ ռիսկայնության աճի հետ: *Տես էջ 2*

# Էրդողան՝ «Պաղեստինյան «Համասը» ահաբեկչական կազմակերպություն չէ»

Երեկ, պատասխանելով ամերիկյան «Բլումբերգ» հեռուստատեսության հայտնի հաղորդավար Չառլի Ռոզի հարցերին, Թուրքիայի վարչապետ Էրդողանը գոհունակություն է հայտնել պաղեստինյան երկու կազմակերպությունների՝ «Ֆաթհի» եւ «Համասի» հաշտեցման առնչությամբ, ապա եւ ասել է. «Ես տարիներ շարունակ ջանք եմ գործադրել նրանց միավորելու համար»:

Այնուհետեւ նա ավելացրել է. «Ձեզ պարզորոշ ասեմ, որ ինքս «Համասին» չեմ դիտարկում որպես ահաբեկչական կազմակերպության: Նախ «Համասը» ասպարեզ է իջել քաղաքական կուսակցության կարգավիճակով, իր օկուպացված երկիրը պաշտպանելու համար է պայքարում: Հետեւաբար նա դիմադրության շարժում է: «Համասին» չպետք է խառնել ահաբեկչական կազմակերպությունների հետ: Երկրում մասնակցել է խորհրդարանական ընտրություններին եւ հաղթել: Ընտրություններից հետո Իսրայելը բանտարկել է խորհրդարանի նախագահին: Ներկայումս այս կուսակցության շուրջ 35 նախարարներ եւ պատգամավորներ իսրայելական բանտերում են»:

Այս ամենի մասին երեկ տեղեկացրել է թուրքական «Դունիա բուլթենի» գործակալությունը: Հ. Չ.

# Իրանի նախագահի հատուկ բանագնացը կրկին Հայաստանում է

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի հատուկ բանագնաց, արտաքին գործերի փոխնախարար Մոհամադռեզա Ռաուֆ Շեյբանիին:

Նախագահ Սարգսյանը ողջունել է հերթական այցով Երեւանում գտնվող ԻԻՀ նախագահի հատուկ բանագնացին՝ նշելով, որ հաճախակի հանդիպումները խոսում են հարեւան երկու պետությունների միջեւ գոյություն ունեցող բարձր մակարդակի հարաբերությունների մասին:



Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում համագործակցությանն ու ՀՀ եւ ԻԻՀ նախագահների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին: Երեկ՝ ավելի վաղ իրանցի դիվանագետին ընդունել էր արտգործնախարար Նալբանդյանը: Ինչպես տեղեկանում ենք ՀՀ ԱԳՆ մամուլի ծառայությունից՝ «զրուցակիցները կարեւորել են հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի աշխատանքը երկկողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործում, որի նիստը նախատեսվում է անցկացնել մոտ օրերին Թեհրանում»:

Հ. Ա.

# Եվրոխորհրդարանի նախագահը ժամանում է տարածաշրջան

Եվրոխորհրդարանի նախագահ Եժի Բուզեկը մայիսի 18-ին պաշտոնական այցով կժամանի Հայաստան՝ սկսելով հարավկովկասյան երկրներ տարածաշրջանային այցը:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության տարածած հաղորդագրության համաձայն, այցի ընթացքում Եվրոխորհրդարանի նախագահը հանդիպումներ կունենա Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, Եվրամիություն-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի եւ խորհրդարանական բոլոր կուսակցությունների անդամների հետ: Նախագահ Բուզեկը նաեւ կհանդիպի Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

# Գագիկ Ծառուկյանը հանդիպել է մտավորականության հետ

Գագիկ Ծառուկյանի մամուլի քարտուղար **Խաչիկ Գալստյանը** հաստատեց այն տեղեկությունը, որ մայիսի 12-ին Գ. Ծառուկյանը, իրեն պատկանող կոնյակի գործարանի սրահում հանդիպել է 70 գիտնականների եւ մշակույթի գործիչների հետ՝ քննարկելով ինչպես մշակույթի, արվեստի, գիտության, կրթության ոլորտային, այնպես էլ ավելի լայն նշանակության հարցեր: Հանդիպման մասնակիցն են եղել ինստիտուտների տնօրեններ, ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, երաժիշտներ: Բոլոր այն հարցերը, որոնք բարձրացրել են հանդիպման մասնակիցները, ԲՀԿ-ում կուսումնասիրեն՝ հնարավորության դեպքում լուծում տալով դրանց: Ըստ լրատվական կայքերի տեղեկությունների՝ նաեւ պետական նշանակության հրատապ հարցեր են քննարկվել: Գ. Ծառուկյանն ասել է, որ իր համար կուսակցական պատկանելությունը չէ կարեւորը, խնդիրը երկիրն այս վիճակից հանելն է, ինքը պաշտոնի ակնկալիք չունի. «Եթե մենք չլուծենք, դուք չլուծեք հարցերը, մեր փոխարեն դա ոչ ոք չի անի», ըստ կայքերի տարածած տեղեկատվության ասել է նա: Ոլորտային աշխատանքային խմբերում հետագայում քննարկումները պետք է շարունակվեն՝ մասնակիցների առաջարկների հիման վրա պետք է կազմվեն իրատեսական ծրագրեր, որոնց իրականացնելու վրա կաշխատեն Գ. Ծառուկյանն ու իր թիմը: Մ. Խ.

# Տիգրան Սարգսյանը՝ 2010 թվականի բյուջեի կատարողականի եւ ՎՊ բացահայտումների մասին

**Վերահսկիչ պալատի բացահայտումները 2010 թվականի վերաբերյալ հատուկ հետաքրքրություն են առաջացնում նաեւ 2010 թվականի բյուջեի կատարողականի առումով, որը երեկ քննարկվում էր Ազգային ժողովի հանձնաժողովներում: Վարչապետ Տիգրան Սարգսյանն այդ քննարկման ժամանակ ելույթ ունենալով՝ անդրադարձավ նաեւ կառավարության՝ ՎՊ հաշվետվության քննարկման ժամանակ երկու ելույթի հնարավորությունը չօգտագործելուն. «Ցավոք սրտի, մենք չենք օգտվել հարակից զեկույցով հանդես գալու մեր իրավունքից: Մեղավորները կպատժվեն, որ մեզ տեղյակ չեն պահել, որ մենք այդ իրավունքից օգտվենք, քանի որ մենք չափազանց կարեւորում ենք Վերահսկիչ պալատի աշխատանքները, եւ այն բացահայտումները, որոնք առկա են»: Ապա անդրադառնալով բուն կատարողականին՝ գնահատեց, թե 2009-2010 թվականների ընթացքում իրականացված հակաճգնաժամային**



**միջոցառումները 2010 թվականի ծրագրերի առումով սկսեցին տալ իրենց դրական արդյունքները. «2010 թվականը կարելի է բնութագրել որպես աստիճանաբար, բայց կայուն վերականգնման տարի, որի ընթացքում մենք շարունակեցինք աշխատել շատ պարզ եւ հասկանալի հակաճգնաժամային ծրագրի տրամաբանության ներքո»:**

*Տես էջ 8*

# Միջազգային կազմակերպության զեկույցը Հայաստանի մասին

Amnesty International-ի հրապարակած 2011 թվականի 400-էջանոց զեկույցում, որտեղ ներկայացված է մարդու իրավունքների վիճակը 157 երկրներում, անդրադարձ կա նաեւ Հայաստանին: Զեկույցն ընդգրկում է 2010 թվականի տեղեկությունները: Amnesty International-ի զեկույցում ներկայացված է մարդու իրավունքների խախտումների հինգ կատեգորիա՝ «Մահվան դեմ ուշիկանության բաժանմունքում», «Անպատժելիություն», «Խոսքի ազատություն», «Բռնություն կանանց եւ աղջիկների նկատմամբ» եւ «Խղճի բանտարկյալներ»: Հայաստանին վերաբերող մասում «Մահվան դեմ ոստիկանության բաժանմունքում» բաժնում նշվում է 2010 թվականի ապրիլին Չարենցավանի ոստիկանության բաժանմունքում դաժան ծեծի ենթարկված եւ մահացած Վահան Խալաֆյանի գործը: «Անպատժելիություն» կատեգորիայում նշվում է, որ 2010 թվականի տարեվերջի դրությամբ այդպես էլ անկախ քննություն չի իրականացվել 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի հարցով: Զեկույցը փաստում է, որ ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել 10 մահվան գործերով, 9 զոհերի հարազատները գլխավոր դատախազությանը մեղադրել են անգործունեության համար, սակայն բոլոր ատյանների դատարանները մերժել են հայցերը: «Խոսքի ազատություն» կատեգորիայում Amnesty International-ն անդրադարձել է Նիկոլ Փաշինյանի պատժաժամկետին՝ նշելով, որ բանտարկյալը քրեակատարողական հիմնարկում հարձակման է ենթարկվել անհայտ անձանց կողմից: «Բռնություն կանանց եւ աղջիկների նկատմամբ» հատվածում հիշատակվում է վարչապետի հրամանագրով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը, որը կոչված է պայքարելու գենդերային բնույթի բռնությունների դեմ: Առանձին հիշատակվում է ամուսնու եւ սկեսրոջ կողմից ծեծի ենթարկված եւ մահացած 20-ամյա Զարուհի Պետրոսյանի անունը: «Խղճի բանտարկյալներ» կատեգորիայում ասվում է, որ Հայաստանում ազատազրկված է զինծառայությունից հրաժարված 73 տղամարդ:

Amnesty International-ը փաստում է, որ առնվազն 89 երկրներում սահմանափակվում է ազատ խոսքը, 48 երկրներում կան «խղճի բանտարկյալներ», 98 երկրների բանտերում եւ ոստիկանության բաժանմունքներում գործադրվում են բռնություններ, եւ 54 երկրներում տեղի են ունեցել անարդար դատավարություններ:

Հ. Ա.

# Եվրոմիությունը գովում է Հայաստանին

Մայիսի 12-ին ԵԱՀԿ մշտական խորհրդում տարածվել է Հայաստանում տեղ գտած վերջին զարգացումների վերաբերյալ Եվրոպական միության հայտարարությունը:

«Եվրոպական միությունն արձանագրում է Հայաստանում տեղի ունեցած վերջին դրական քաղաքական զարգացումները: Եվրոպական միությունը, մի շարք առիթներով մտահոգություններ է հայտնել երկրում հավաքների ազատության առնչությամբ: Այդ կապակցությամբ մենք ողջունում ենք այն փաստը, որ երկար ժամանակ անց առաջին անգամ Երեւանի քաղաքային իշխանությունները թույլատրեցին քաղաքական ընդդիմությանը ապրիլի 28-ին հանրահավաք անցկացնել Ազատության հրապարակում: Հուսով ենք, որ հանրահավաք անցկացնելու հետագա դիմումները կարժանանան նույն արձագանքին: Այս հանրահավաքի ընթացքում պահպանվեց կարգ ու կանոնը՝ ինչը, ըստ ամենայնի, արդյունք էր իրավապահ մարմինների եւ ընդդիմադիր խմբերի արդյունավետ համագործակցության: Հաշվի առնելով, որ 2012թ. Հայաստանում մեկնարկելու է նոր ընտրաշրջանը, հատկապես կարեւորում ենք հավաքների ազատության հարգումը: Եվրոպական միությունը նաեւ ողջունում է նախագահ Սարգսյանի ապրիլի 20-ի հայտարարությունը, որտեղ կոչ է արվում առավել մանրակրկիտ հետաքննություն անցկացնել 2008թ. մարտյան դեպքերի առնչությամբ: Այդ նույն համատեքստում ողջունում ենք, որ վերջին շաբաթների ընթացքում, այդ դեպքերից հետո դատապարտված եւ կալանավորված երեք ընդդիմադիր ակտիվիստներ՝ Հարություն Ուռուտյանը, Ռոման Մնացականյանը եւ Արամ Բարեղամյանը, վաղաժամ ազատ են արձակվել: Կոչ ենք անում Հայաստանի իշխանություններին՝ շուտ ազատ արձակել բոլոր մնացյալ ակտիվիստներին: Եվրոպական միությունը գտնում է, որ 2008թ. մարտյան դեպքերի մանրակրկիտ հետաքննությունը եւ այդ դեպքերի առնչությամբ ձերբակալված բոլոր անձանց ազատարձակումը կօգնեն Հայաստանի իրական առաջխաղացմանը»:

Հ. Ա.

# «Արձանագրությունների սառեցված վիճակը ձեռնտու է Թուրքիային, բայց ոչ Հայաստանին»

Հայ դատի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Կիրո Մանոյանը** երեկ ասուլիսի ժամանակ անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների թեմային՝ նշեց, որ Հայաստան-Թուրքիա բանակցությունների գործընթացն արդեն վաղուց փակուղի է մտել, քանի որ Թուրքիան նախապայման է դնում Ղարաբաղի հարցի կարգավորումը. «Հայաստանի համար լավ կլինի, որ ստորագրությունները հետ վերցնի»: «Դուպլեքս» ակումբում նա պարզաբանեց, որ արձանագրությունների սառեցված վիճակը ձեռնտու է Թուրքիային, բայց ոչ Հայաստանին:

Այնուհետեւ անդրադառնալով հարցին, թե ինչպե՞ս է վերաբերվում այն փաստին, որ Ղրղզստանից 200 համշենահայերի ընտանիքներ պատրաստակամություն են հայտնել գալ ու բնակություն հաստատել Արցախում, Կիրո Մանոյանը նշեց. «Կարծում եմ, մեր կողմից պետք է ողջունվի այդ վերադարձը»: Նրա կարծիքով՝ համշենահայերի Ղարաբաղում բնակվելու փաստը մեզ համար չի կարող վտանգ լինել. «Եթե այդ վտանգը պետք է կրոնը լինի, ապա դա իսկապես անարդար կլինի: Եթե նրանք ցանկանում են վերադառնալ կամ տեղափոխվել, ապա պետք է նպաստել դրան»: Բանախոսը չբացառեց, որ ժամանակի ընթացքում համշենահայերը կվերադառնան նաեւ իրենց քրիստոնեական արմատներին, սակայն դա նրանց չպետք է պարտադրվի:

Ի. Պ.

# Արտագաղթի թեմայով քննարկում Գյումրիում

*1-ին էջից*

Արմինե Գմյուր-Կարապետյանը, մարզում առկա իրավիճակը գնահատելով որպես հոգեբան, զուտ անձնական դիտարկումների հիման վրա կարծիք հայտնեց, թե մի տեսակ կանգի վիճակ է ստեղծվել համարյա բոլոր ոլորտներում, ինչպես մի պահ երկրաշարժից հետո: Այդ զգացողությունը, երբ մանավանդ տեւական է, շատ ծանր ապրում է, որը նաեւ թողնում է շատ ու շատ խորքային հետեւանքներ: Տուժում են սոցիալական բոլոր, իսկ ամենից շատ՝ խոցելի խմբերը՝ աղքատ խավը, երեխաները, հաշմանդամները, որոնք հայտնվում են անելանելի վիճակում: Տուժում է ընտանիքը...

Այսօր մեր երկրի զարգացմանը խոչընդոտող եւ մարզերից բնակչության ակտիվ արտահոսքը խթանող գործոն է նաեւ ամեն ինչի կենտրոնացումը մայրաքաղաք Երեւանում: Մեր հարեւան վրացիները, ինչպես նշվեց քննարկման ժամանակ, Թբիլիսիից հանել կամ հանում են մի շարք կարեւորագույն խոշոր հաստատություններ. խորհրդարանը տանում են երկրորդ քաղաք Քութայիս, Բաթումը դարձել է Սահմանադրական դատարանի նստավայր եւ ընդհանրապես ծաղկում մի օազիս ամբողջ Կովկասում: Մեր իշխանավորների կողմից, չնայած մերթ-մերթ հնչող հայտարարություններին, նման ապակենտրոնացում դժվար է ակնկալել, քանի որ դա պետական ապարատի մեկ կենտրոնից վերահսկողությունը կթուլացնի: Այսպիսի կարծիք հայտնեց Դերենիկ Մալխասյանը: Ըստ նրա վկայակոչած մամուլի մի հրապարակման՝ 2011 թվականի անցած ամիսների ընթացքում «Զվարթնոց» եւ «Շիրակ» օդանավակայաններից մեկնել է եկածների համեմատությամբ 45 հազար մարդով ավելի: Գյումրիում այդ հեռանալու, երկիրը լքելու միտումն ավելի շատ է արտահայտված՝ պայմանավորված ոչ միայն եւ գուցե ոչ այնքան սոցիալական ամենավատ վիճակով, որքան տեսանելի հեռանկարի բացակայությամբ, երբ մարդն իր երեխայի համար Հայաստանում հեռանկար չի տեսնում: Եվ հիմա արդեն հեռանում են մարդիկ, որոնք սոցիալապես ապահովված են... Սա, ինչպես ճիշտ նկատվեց, իշխանություններին մտորելու տեղիք պետք է տա եւ մղի դեկլարատիվ հայտարարություններից գործնական քայլերի անցնելու, քանի դեռ ուշ չէ: Եթե Գյումրիում մարդը փակում է իր բիզնեսը եւ վերաբացում Վրաստանում, դա նաեւ նրանից է, որ հարեւան երկրում գործարարն առավել պաշտպանված է, կա օրենք եւ այդ օրենքը գործում է, բավական լուրջ քայլեր են արվել ընդդեմ կոռուպցիայի:

Քննարկման մասնակիցների կողմից անդրադարձեր եղան ու կարծիքներ հնչեցին նաեւ Գյումրիում աշխատանք գտնելու դժվարության, մարզի հատկապես սահմանամերձ Ամասիայի գյուղերի սակավ բնակեցվածության ու «ծերացման», կյանքի որակ հասկացության, մեր երկրում սոցիալական մեծ բեւեռացման, հայ քաղաքացու ձեւավորման հետ կապված եւ այլ խնդիրների մասին:

Արտագաղթը նաեւ բողոքի յուրատեսակ ձեւ է: Դրա հիմնական պատճառներից մեկը, Թաթուլ Հակոբյանի բանաձեւմամբ, հետեւյալն է. հայերը կարող են զրկանքներով ապրել երկար ժամանակ, բայց չեն հանդուրժում անարդարությունը: Այսինքն՝ երբ (իշխանությունները) մեկ բան ասում եւ իրենց նկատմամբ մեկ այլ բան են անում:



# Ալեքսանդր Մանթաշյանցի արձանը կտեղադրվի Աբովյան փողոցում



**Երեւանի քաղաքապետարանի գեղարվեստի խորհուրդն այս տարվա իր առաջին նիստում քննարկել է Գարեգին Նժդեհի ձիարձան-հուշարձանի նույնանուն հրապարակում տեղադրման եւ Երեւան քաղաքում հայ մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի արձանի տեղադրման առաջարկները: Նիստը վարել է խորհրդի նախագահ, Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը:**

**Առաջին հարցի վերաբերյալ ծավալված քննարկման ընթացքում խորհրդի անդամները տարբեր կարծիքներ են արտահայտել ինչպես ձիարձանի գեղագիտական, այնպես էլ արձանի տեղադրման ճարտարապետական լուծումների առնչությամբ: Քաղաքապետն առաջարկել է հետաձգել հարցի քննարկումը՝ Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետին հանձնարարելով հաջորդ նիստին հարցը ներկայացնել մասնագիտական խմբի համակողմանի քննարկումից հետո:**

**Գեղարվեստի խորհուրդը քվեարկությամբ հավանություն է տվել հայ մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի արձանի տեղադրման հարցին: Առաջարկված երկու տեղերից խորհուրդը հավանություն է տվել արձանը Աբովյան փողոցում, նախկին մանկական հանրախանութի հարակից տարածքում, բարերարի միջոցներով կառուցված Առնո Բաբաջանյան համերգասրահի հարեւանությամբ տեղադրելու առաջարկին:**

*Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն*

# Մարգարիտա Սիմոնյանը ORT-ի տնօրենների խորհրդի անդամ կդառնա

**Ռուսական «Կոմերսանտ» թերթի տվյալներով, ՌԴ կապի նախարար Իգոր Շչոգոլյովի փոխարեն, ռուսական առաջին ալիքի տնօրենների խորհրդի անդամ է դառնալու Russia Today հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանը:**

**Տեղեկատվության համաձայն, նման որոշում է կայացվել այն բանից հետո, երբ նախարարը երկրի նախագահի կարգադրության համաձայն լքել է խորհրդի անդամակցությունը:**

**Ինքը՝ Մարգարիտա Սիմոնյանը, չի հերքել, եւ չի հաստատել տարածված տեղեկատվությունը: Թերթի փոխանցմամբ, ռուսական առաջին հեռուստաընկերության տնօրենների խորհրդի կազմում են հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Կոնստանտին Էռնստը, նրա տեղակալ Կիրիլ Կլեյմոնովը, «Մոսֆիլմ»-ի ղեկավար Կարեն Շախնազարովը, կինոռեժիսոր Նիկիտա Միխալկովը, ՄԳԻՄՕ-ի ռեկտոր Անատոլի Տորկունովը, ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալեքսեյ Գրոմովը: Ի դեպ, ըստ պարբերականի, վերջինս նույնպես պատրաստվում է հեռանալ պաշտոնից: Գրոմովի փոխարեն հավանական թեկնածուների շարքում է Altera Capital ընկերության ղեկավար Կիրիլ Անդրոսովը:**

**ORT-ի հեռուստաընկերության տնօրենների խորհրդի նախագահը Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինն է:**

# Հարցաքննության հրավեր

**ՀՀ հատուկ քննչական ծառայությունում շարունակվում է 2008թ. մարտի 1-ից 2-ը Երեւան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ընթացքում կատարված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Զանգվածային անկարգությունների ընթացքում Դավիթ Պետրոսյանի մահվան հանգամանքները պարզելու կապակցությամբ կատարված նախաքննությամբ հաստատվել է, որ վերջինս հրազենային մարմնական վնասվածք ստանալուց հետո Մաշտոցի պողոտայի գյուղմթերքների շուկայի մոտակայքից քրեական գործով չպարզված սպիտակ «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենայով տեղափոխվել է թիվ 2 կլինիկական հիվանդանոց: Նախաքննական մարմինը խնդրում է «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենայի վարորդին, ավտոմեքենայի վերաբերյալ տեղեկություններ ունեցող, ինչպես նաեւ վերը նշված դեպքին ականատես անձանց դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննչական խմբին 511-612 հեռախոսահամարով կամ ներկայանալ ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քաղ. Երեւան, Վ. Սարգսյան 5, հարցաքննության:**

*ՀՀ հատուկ քննչական ծառայություն*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կոմիտասի 5ա շենքի բնակիչները ահազանգում են

Անցյալ տարի մի քանի օր տեւած բողոքի ակցիաներից եւ նամակներից հետո այն ժամանակվա քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը որոշակի ժամանակով դադարեցրեց Կոմիտաս 5ա շենքում տրամվայ-տրոլեյբուսների էլեկտրական սնուցման ենթակայանի տեղափոխումը: Հաշվի առնելով հարցի կարեւորությունն ու բնակիչների իրավացի մտահոգությունը, «**Ազգ**» օրաթերթը բազմիցս անդրադարձել է խնդրին: Հիշեցնենք, որ նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի որոշմամբ «Լիբեր» ՍՊԸ-ին թույլատրվում էր շենքի դիմացի ենթակայանը տեղափոխել հարակից այգի, իսկ ենթակայանի տեղում բազմահարկ բնակելի շինություն կառուցել: Ընդունված նորմերով ենթակայանները բնակելի տարածքներից պետք է գտնվեն 20 մետր հեռավորության վրա, որպեսզի բնակիչները չճառագայթվեն: Սակայն քաղաքապետարանի վերոնշյալ նախագծով, ենթակայանը շինարարական աշխատանքների ավարտից հետո բնակելի շենքից կգտնվի 5 մետր հեռավորության վրա:

Տրամվայ-տրոլեյբուսների էլեկտրական սնուցման ենթակայանի տեղափոխումը շենքի անմիջական հարեւանությամբ ոտնահարում է Կոմիտասի 5ա շենքի բնակիչների իրավունքները: Խախտվում են առողջապահական եւ բնապահպանական բոլոր նորմերը: Էլեկտրական սնուցման բարձր լարման այդ ենթակայանը, որ չպետք է մոտ գտնվի բնակելի շենքի տարածքին, պարունակում է մարդու առողջությանը վնասող ֆիզիկական նյութեր, առաջացնում աղմուկ եւ վիբրացիա: Ենթակայանի տեղափոխությունը, փաստացի զրկում է առաջին եւ երկրորդ հարկի բնակիչներին լուսավորությունից՝ նրանց բնակարանները դարձնելով նկուղային:

«Երբ քաղաքապետը փոխվեց, կարծեցինք, թե նա վերջ կդնի բոլոր անօրինական որոշումներին, իսկ երբ «**Ազգ**» թերթում կարդացինք, որ նոր քաղաքապետն արգելելու է կանաչ գոտիներում շինարարությունը, կարծեցինք, թե այդ որոշումը մեզ էլ է վերաբերում», պատմում են շենքի բնակիչները:



*Լուսանկարն արվել է 2010-ին: Այս ծառերը երեկվանից այլեւս չկան:*

Երեկ առավոտյան կառուցապատող ընկերության աշխատողները մտել են շենքի բակն ու սկսել ծառահատումը: Բնակիչների արձագանքին, թե ովքեր են ու ինչու են 20 տարվա պտղատու այգին կտրում, շինարարական ընկերության աշխատակիցները ցույց են տվել քաղաքապետարանի թույլտվությունը տեղում շինարարական աշխատանքներ իրականացնելու մասին: Մինչ քաղաքացիները զանգահարել են Արաբկիրի տեղամասային ոստիկանություն, աշխատողները կտրել են այգու մոտ երկու տասնյակ ծառերն ու խաղողի վազերը:

Արաբկիրի տեղամասային ոստիկանության տեսուչ լեյտենանտ **Դեղտրիկյանը** «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց, որ կառուցապատող ընկերությունն օրենքի խախտում չի կատարում. «Նրանք քաղաքապետից ունեն համապատասխան գրություն, եւ չենք կարող առանց քաղաքապետարանի թույլտվության կասեցնել շինարարությունը: Բերեք քաղաքապետի համապատասխան որոշումը, որով արգելվում է շինարարությունը, մենք նույն վայրկյանին կարգելենք կառուցապատող ընկերությանը շինարարական աշխատանքներ ծավալել»:

Խորհրդային տարիներին ենթակայանի փոխակերպիչներն աշխատում էին սնդիկով: 90-ականներին բակը, որտեղ քաղաքապետարանը թույլատրել է շինարարություն, վերածվել է սնդիկի գերեզմանոցի: «Եթե նրանք հողը փորեն, սնդիկը նորից դուրս կգա: Դա վտանգավոր է», ասում են բնակիչները:

Նրանք պատմում են, որ շենքի բնակիչներից շատերն են մահացել քաղցկեղ հիվանդությամբ:

«Եթե հետազոտություն անցկացվի, ապա պարզ կդառնա, որ շենքի մոտ 40 բնակիչ մահացել է քաղցկեղ հիվանդությունից», ասում են բնակիչները: Նրանք համոզված են, որ հիվանդության պատճառը ենթակայանն է: Բնակիչներին նաեւ անհանգստացնում է, թե սնդիկով հարստացած շինարարական աղբը որտեղ է լցվելու:

Օրվա երկրորդ կեսին բնակիչները հանդիպել են քաղաքապետարանի աշխատակիցներին: Քաղաքապետ Կարեն Կարապետյանը քաղաքապետարանում չի եղել: Փոխքաղաքապետ Տարոն Մարգարյանի հետ խորհրդակցությունից հետո բնակիչներին հայտնել են, որ շինարարությունը ժամանակավոր կասեցվում է:

Երկուշաբթի բնակիչները կդիմեն դատարան՝ պահանջելով քաղաքապետարանի որոշումը համարել անօրինական:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կանաչ տարածքները պահպանենք աչքի լույսի պես

Բոլորիս աչքի առաջ կանաչ տարածքներում ծլում են սրճարաններ, բենզալցակայաններ, առեւտրի կետեր, զվարճանքի գիշերային ակումբներ եւ այլն: Եվ ցավալին այն է, որ դրանցից շատերն ունեն կառուցապատելու թույլտվություն: «**Ազգը**» բազմիցս անդրադարձել է այդ խնդրին ու շարունակելու է մեր սրտացավ բնակիչների հետ պայքարել կանաչ տարածքները զավթողների ու նաեւ անթույլատրելի թույլտվություններ տվողների դեմ:

Երեկ առավոտից խմբագրություն էին զանգահարում Հերացու 18, 20 շենքերի բնակիչները ու ահազանգում, որ երկու օր է, իրենց շենքի ճակատային մասում ինչ-որ մարդիկ փորձում են սրճարան կառուցել հենց միակ կանաչ տարածքում, որը այդ երկու շենքի բնակչության համար թթվածնի ու մաքուր օդի հիմնական աղբյուրն է: «**Ազգը**» եղավ նշված հասցեում եւ տեսավ, որ բարդու ծաղկած կանաչ մեծ ճյուղը ընկած էր մայթին: Կենտրոն վարչական տարածքի կոմունալ վարչության գլխավոր մասնագետ **Ռուբեն Սարգսյանը** (մեր ահազանգից հետո ճարտարապետների հետ լինելով նշված հասցեում) նշեց. «Նախորդ օրը Կենտրոն վարչական տարածքի ղեկավարը, ճարտարապետները, կոմունալ բաժնի պետը, սանմաքրման բաժնի ներկայացուցիչների հետ եղել ենք Հերացու 18 եւ 20 շենքերի



տարածքում, ուսումնասիրել ենք աղբահանության ու կանաչապատման հարցերը: Երեկ առավոտյան այդ բակերից հեռացվել է տարիների ընթացքում կուտակված կենցաղային ու շինարարական աղբը: Այդ աշխատանքների կատարման ընթացքում տրակտորի շարժի ժամանակ կոտրվել է ձեր նշած ծառի ճյուղը: Ես վստահորեն նշում եմ, որ այդ կանաչապատ ու ծառերով խիտ բակերում որեւէ ավտոտնակ, սրճարան կամ այլ կառույց չի կարող կառուցվել: Չի կտրվել եւ չի կտրվի ոչ մի ծառ, իսկ չորացած ծառերը սկզբում դենդրոլոգները կփորձեն բուժել, եթե չբուժվի, նոր որոշում կկայացվի. այդ մեկ ծառը կտրել: Պարզապես այդ բակերում կատարվել են սանմաքրման ու աղբահանության աշխատանքներ»:

Հուսանք, որ ավտոմեքենաների արտանետումներից պաշտպանվելու համար բնակիչների միակ պատվար հանդիսացող այգին կծառայի իր նպատակին, ինչպես եղել է տարիներ շարունակ, ու բնակիչներին քիչ թե շատ մաքուր օդ կպարգեւի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՈՐԾԱԴԻՐ

# Հեռուստատեսային եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նոր անդամներ

**Նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Ժիրայր Դադասյանին, Հարություն Հարությունյանին, Վլադիմիր Օհանյանին Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամներ նշանակելու մասին (լիազորությունների ժամկետը՝ վեց տարի)՝ հիմք ընդունելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը: Այս մասին տեղեկացնում են նախագահի լրատվական ծառայությունից: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգի համաձայն, մինչ հանրապետության ղեկավարի հրամանագիրը, ՀՀ նախագահի 2011-ի ապրիլի 21-ի կարգադրությամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի 7 մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշել է մրցույթի հաղթողներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հաղթող ճանաչել Ժիրայր Դադասյանին, Հարություն Հարությունյանին, Վլադիմիր Օհանյանին՝ հիմք ընդունելով լրագրության ոլորտում եւ հատկապես հեռուստատեսությունում այդ թեկնածուների երկարամյա աշխատանքային փորձը, ինչպես նաեւ լրագրության ոլորտի զարգացման գործում ունեցած ակնառու հաջողություններն ու ձեռքբերումները:**

# Թիվ 76 եւ 69 միկրոավտոբուսային երթուղիները սպասարկողները զրկվեցին դրանք սպասարկելուց

**Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, քաղաքապետարանում քաղաքացիներից ստացված բողոքների, տրանսպորտի եւ կապի նախարարության տրանսպորտային տեսչության պետի զեկուցագրի համաձայն, թիվ 76 երթուղին սպասարկող ընկերության վարորդները որպես փոխադրավարձ ուղեւորներից գանձել են 200 դրամ: Ընկերության տնօրենը հաստատել է 200 դրամ ուղեվարձ գանձելը, ինչը ընկերության եւ քաղաքապետարանի միջեւ կնքված պայմանագրով նախատեսված՝ երթուղին 100 դրամով սպասարկելու պարտավորության խախտում է:**

**Թիվ 69 երթուղին սպասարկող ընկերությունը խախտել է Երեւանի քաղաքապետարանի հետ կնքած պայմանագրի մեկ այլ կետ, որի համաձայն նախատեսվում է երթուղին սպասարկել դեղին հիմնագույնի պետհամարանիշներով միկրոավտոբուսներով, եւ երթուղին սպասարկել է չհայտագրված փոխադրամիջոցներով:**

**Հիմք ընդունելով վերը նշված, ինչպես նաեւ իրականացված մոնիտորինգով արձանագրված մի շարք խախտումները, Երեւանի քաղաքապետի որոշմամբ մայիսի 20-ից լուծված են համարվում նշված ընկերությունների հետ կնքված պայմանագրերը, եւ վերջիններս նույն օրվանից զրկվում են տվյալ երթուղիները սպասարկելու իրավունքից: «Երեւանտրանս» ընկերությանը հանձնարարվել է մինչեւ նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը թիվ 76 եւ 69 երթուղիներում սպասարկման նպատակով պայմանագիր կնքել տրանսպորտային միջոցներ ունեցող այլ կազմակերպության հետ:**

Ա. Ս.

# Բեռնափոխադրողներին լրացուցիչ ժամանակ տրամադրվեց

**Տնտեսական մրցակցության հանձնաժողովի երեկվա նիստում տեղի ունեցած քննարկման ժամանակ Թուրքիայից եւ Չինաստանից հագուստի ներկրմամբ զբաղվող բեռնափոխադրող ընկերությունների ներկայացուցիչները հանձնաժողովից խնդրել են հավելյալ ժամանակ տրամադրել՝ վարչական վարույթի նյութերին լիարժեք ծանոթանալու համար: Ըստ հանձնաժողովի, «ելնելով գործի հասարակական հնչեղությունից եւ կարեւորությունից, հանձնաժողովը որոշեց մեկ անգամ եւս ընդառաջել «Ջոու ընկեր», «Պրոֆ Իմպորտեքս», «Նանիս» եւ «ՍՕՀՕ» ընկերությունների ներկայացուցիչներին»:**

# «Ալեքս գրիգը» կրկին տուգանվեց

**Տնտեսական մրցակցության հանձնաժողովի երեկվա որոշմամբ, պահանջված տեղեկատվությունը հանձնաժողովին սահմանված ժամկետում չտրամադրելու համար «Ալեքս Գրիգ» ընկերությունը տուգանվել է 500 հազար դրամով, ինչն այս դեպքում օրենքով սահմանված առավելագույն պատժաչափն է: Նիստի ընթացքում «Ալեքս Գրիգ» ընկերության ներկայացուցիչը ընդունել է օրենքի խախտման փաստը եւ նշել, որ ընկերությունը պարտավորվում է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:**

**Հանձնաժողովի տեղեկատվության համաձայն, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի նոր փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո նման դեպքում կիրառվող տուգանքի չափը կազմում է մինչեւ 5 միլիոն դրամ:**

Ա. Ս.

# «Արդշինինվեստբանկն» առաջինը ստորագրեց գյուղվարկավորման ծրագրին մասնակցելու պայմանագիրը

**Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկը գյուղատնտեսության նախարարության հետ առաջինն է ստորագրել համագործակցության պայմանագիր՝ սուբսիդավորվող տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկերի ծրագրին մասնակցելու վերաբերյալ:**

**Վարկավորման գործընթացն արդեն սկսվել է, ձեւակերպվել է 11 վարկ՝ 8 մլն դրամի չափով: «Արդշինինվեստբանկը» գյուղատնտեսական վարկերը տրամադրում է առավելագույնը 14 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 4-ից 6 տոկոսը սուբսիդավորում է պետությունը:**

**Ըստ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահի պաշտոնակատար Կ. Գեւորգյանի՝ «Արդշինինվեստբանկի» որպես կայուն եւ վստահելի բանկի վարկանիշն օգնել է, որ մեր բանկն ընդգրկվի գյուղվարկավորման սուբսիդավորման ծրագրում: Մասնակցությունն այս ծրագրին հնարավորություն կտա մեզ՝ աջակցելու գյուղական բնակավայրերի եւ գյուղացիական տնտեսությունների զարգացմանն ուղղված կառավարության նախաձեռնությանը»:**

Ա. Ս.

# Դրամը աստիճանաբա՞ր արժեզրկվեց

## Առավել հավանական է, որ աստիճանաբար արժեւորվի

Նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 11-ին հրավիրված տնտեսական քաղաքականության իրականացման առաջնահերթությունների վերաբերյալ խորհրդակցության ժամանակ խոսեց նաեւ ազգային արժույթի հետագա վարքագծի մասին: Մասնավորապես, ըստ նախագահի, դրամի արժեւորումը տնտեսության եւ ներքին արտադրողի համար անբարենպաստ եւ անընդունելի երեւույթ է: «Բոլոր կանխատեսումները խոսում են այն մասին, որ մենք ունենալու ենք դրամի շատ դանդաղ եւ կայուն արժեզրկում՝ առանց նկատելի թռիչքների ողջ տարվա ընթացքում», ասաց Սերժ Սարգսյանը:

Ի՞նչ տեղի ունեցավ նախագահի այս ելույթից հետո: Դրամի փոխարժեքը կտրուկ նվազեց՝ 1 դոլարի դիմաց 360-365 դրամից հասնելով մինչեւ 1 դոլարի դիմաց 370-375 դրամի: Պատճառն այն էր, որ երկրի ղեկավարի այս հայտարարության հետեւանքով բնակչության մեջ ձեւավորվեցին համապատասխան սպասումներ: Այսինքն, եթե երկրի նախագահն ասում է, որ դրամը արժեզրկվելու է, անկախ նրանից, թե ինչ է նկատի ունեցել եւ ինչ ժամկետի համար, բնակչությունն անմիջապես նետվում է այն փոխանակելու եւ դոլար դարձնելու: Այդ գործընթացն այնքան աշխույժ էր, որ անգամ մարտ ամսին իրանցի զբոսաշրջիկների զանգվածային հոսքը Հայաստան, որն իր հետ բերում էր կարճ ժամանակահատվածի համար բավականանին մեծ դոլարային մուտքեր, դրամի կտրուկ արժեզրկման ընդհանուր պատկերը չփոխեց:

Հայտնի է, որ մեր երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող ամենաիրական վտանգներից է դոլարիզացիան: Դրա համար, առանց նախագահի ելույթի էլ, բարենպաստ միջավայրն առկա է՝ ի դեմս մեր բնակչության դոլարի հանդեպ ունեցած ինքնամոռաց սիրո: Դրա մասին են վկայում դոլարիզացիայի բարձր ցուցանիշները: Ըստ Կենտրոնական բանկից մեզ տրամադրած տեղեկատվության, անցյալ տարվա երկրորդ կեսից սկսված դոլարիզացիայի նվազման տեմպերը այս տարվա առաջին եռամսյակում կրկին սկսել են ավելանալ: Երկու հիմնական՝ արտարժութային ավանդների ու փողի զանգվածի հարաբերակցության եւ արտարժութային ավանդների ու ընդհանուր ավանդների հարաբերակցության ցուցանիշներն այդ են վկայում:

Արտարժութային ավանդների ու փողի զանգվածի հարաբերակցությունը 2010-ի հունիս-հուլիսից սկսեց նվազել: Եթե մայիսին արտարժութային (դոլարային) ավանդները փողի զանգվածում կազմել էին 47 տոկոս, ապա հունիս-հուլիսից նվազեցին եւ դեկտեմբերին հասան 42,8 տոկոսի: Գրեթե նույնն է պատկերը նաեւ արտարժութային ավանդների ու ընդհանուր ավանդների հարաբերակցության ցուցանիշի դեպքում: Այստեղ մայիսից դոլարային ավանդները, ընդհանուր ավանդները սկսեցին նվազել, ապրիլի 71,2 տոկոսից իջնելով 69,5 տոկոսի, իսկ դեկտեմբերին հասնելով 64,3 տոկոսի:

2011-ի առաջին եռամսյակում արդեն երկու ցուցանիշների մասով էլ դոլարիզացիայի ցուցանիշները կրկին բարձրացել են: Հունվարին արտարժութային (դոլարային) ավանդները փողի զանգվածում կտրուկ բարձրանալով՝ կազմել են 45,5 տոկոս, փետրվարին՝ 45,2 տոկոս, մարտին՝ 45,6 տոկոս: Դոլարային ավանդները ընդհանուր ավանդների մեջ այս տարվա հունվարին կազմել են 66,1 տոկոս, փետրվարին՝ 65,3 տոկոս, մարտին՝ 65,1 տոկոս: Թեեւ մարտին հունվարի համեմատ դոլարային ավանդները 1 տոկոսով նվազել են, բայց բարձր են անցյալ տարվա վերջին եռամսյակի ցուցանիշի համեմատ:

Նկատենք, որ սրանք այս տարվա մարտի ցուցանիշներն են, իսկ նախագահի հայտարարությունն արվել է մարտին: Այսինքն, կարելի է ենթադրել, որ դրա ազդեցությունը կերեւա հաջորդող ամիսների ցուցանիշների մեջ: Իսկ թե ի՞նչ վտանգների կարող է հանգեցնել դոլարիզացիայի մակարդակի բարձրացումը մեր տնտեսության համար, թերեւս լրացուցիչ բացատրության կարիք չունի: Բավական է հիշել մի քանի տարի առաջ Արգենտինայի տնտեսության փլուզումը, որը հենց բարձր դոլարիզացիայի հետեւանքն էր:

Նախագահի վերեւում նշված հայտարարության կապակցությամբ, Կենտրոնական բանկի նախագահին վերջին ճեպազրույցի ժամանակ հարց ուղղեցինք, թե դա նշանակո՞ւմ է, որ ԿԲ քաղաքականությունը փոփոխություն է կրել: Արթուր Ջավադյանը պատասխանեց, որ նախագահի ասածը վերաբերում էր երկարաժամկետ մակարդակին, բայց կան սեզոնային գործոններ, օրինակ՝ գյուղմթերքների, արտերկրից փոխանցումների հետ կապված, երբ դրամը արժեւորվում է: Ըստ ԿԲ նախագահի, Կենտրոնական բանկը ազգային արժույթի թուլացման քաղաքականություն չի վարում:

Հասկանալի է, որ ԿԲ նախագահը չի կարող հակառակվել երկրի նախագահին, բայց երբ վերջինիս հայտարարությունից հետո մարդիկ նետվեցին դոլար գնելու, գոնե այդ ժամանակ հայտարարեր, որ Կենտրոնական բանկը դրամի թուլացման քաղաքականություն չի վարելու: Դա գուցե որոշ չափով կասեցներ դրամը դոլար դարձնելու հետ կապված իրարանցումը:

Այժմ էլ անհասկանալի եւ անորոշ իրավիճակ է ստեղծվել: Մի կողմից Սերժ Սարգսյանն ասում է, որ «ունենալու ենք դրամի շատ դանդաղ եւ կայուն արժեզրկում», մյուս կողմից Արթուր Ջավադյանը՝ «ազգային արժույթի թուլացման քաղաքականություն չենք վարում»: Հավանաբար, բնակչության մեջ գերակշռելու են նախագահի հայտարարության ազդեցությունն ու դրանով պայմանավորված սպասումները: Սակայն առավել հավանական է, որ դրամի արժեզրկումը չի շարունակվի: Ինչը ոչ այնքան ԿԲ նախագահի հավաստիացմամբ կամ ԿԲ դրամավարկային քաղաքականությամբ է պայմանավորված, որքան տնտեսական բնական գործընթացներով:

Նախ, աշխարհում վերջին մեկ ամսվա ընթացքում դոլարի դիրքերը թուլացել են, ինչը չի կարող իր ազդեցությունը չթողնել նաեւ դրամ-դոլար հարաբերակցության վրա: Սեզոնային գործոններից ամռանը, գյուղմթերքների բերքով պայմանավորված, դրամը սովորաբար արժեւորվում է: Արտահանման խրախուսման քաղաքականությունը, որը մտադիր են իրականացնել նախագահն ու կառավարությունը, բերելու է արտարժույթի ներհոսք Հայաստան, նույնպես ազդելով դրամի արժեւորման վրա: Արտերկրից մասնավոր փոխանցումների ծավալները ավելանում են, ինչը նույնպես նպաստում է դրամի արժեւորմանը:

Գնաճի զսպման նպատակով ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության կոշտացումը, այսինքն՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքների բարձրացումը եւս նպաստում է դրամի արժեւորմանը: Կենտրոնական բանկի կողմից բանկերի պարտադիր պահուստավորման նորմատիվներում վերջերս կատարված փոփոխությունը, ըստ որի՝ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափից, որը կազմում է 12 տոկոս, այսուհետեւ 9 տոկոսը պետք է կատարվի հայկական դրամով, իսկ 3 տոկոսը՝ արտարժույթով, նույնպես նպաստելու է ազգային արժույթի արժեւորմանը: Հիշեցնենք, որ մինչ ԿԲ-ի այս որոշումը, ներգրավված միջոցների դիմաց հայկական դրամով եւ արտարժույթով պահուստավորումը հավասարապես 6-ական տոկոսով էր:

Վերոնշյալ գործոններն անառարկելիորեն խոսում են առաջիկա ամիսներին դրամի ոչ թե աստիճանական արժեզրկման, այլ աստիճանական արժեւորման մասին: Այլ բան է, եթե Սերժ Սարգսյանը մեկ անգամ եւս որոշի անձամբ միջամտել եւ իր հայտարարությամբ բնական գործընթացներին հակառակ սպասումներ ձեւավորել: Սակայն հուսով ենք, որ նման բան նա այլեւս չի անի: Իսկ տեղական արտադրողներին ճիշտ կլինի աջակցել այլ ձեւերով, որպիսիք հենց նախագահն է առաջարկել գործարարների հետ իր վերջին հանդիպումների ժամանակ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ճաշկերույթ Նյու Ջերսիում՝ ի պատիվ «Արմինյն միրոր սփեքթեյթրի»

**Թեքեյան մշակութային միության եւ ««Արմինյն միրոր սփեքթեյթրի» բարեկամների» ընկերակցության կազմակերպությամբ հունիսի 4-ին Թինեքում (Նյու Ջերսի) տեղի կունենա ճաշկերույթ-հանդիսություն նվիրված Մ. Նահանգներում առաջին անգլիալեզու հայկական պարբերականի՝ «Միրոր սփեքթեյթրի» հրատարակման 80-ամյակին, տեղեկացնում է Արամ Արքունի՝ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը:**

**Պարբերականի հրատարակման գաղափարը մտահղացվել էր 1931-ին եւ իրականություն դարձել 1932-ին: ԹՄՄ-ն մեծապես աջակցում է թերթի հրատարակմանը: Միության Նյու Յորքի մասնաճյուղի խորհրդատուներից Վարդան Իլանջյանի հավաստմամբ՝ թերթի վաղ շրջանի անձնվեր աջակիցներ՝ դոկս. Մովսես Հուսեփյանի, Ջեկ Անդրեասյանի եւ Արմինե Դիքիճյանի ջանքերը հիշատակվելու են եւ պատշաճ գնահատանքի արժանալու հանդիսության ընթացքում:**

**«Մեծ է եղել «Միրոր սփեքթեյթրի» դերը Մ. Նահանգներում: Թերթը մեծապես նպաստել է հայկական մշակութային արժեքների եւ գաղափարախոսության պահպանմանն ու հարատեւությանը, դիմակայել է բազմաթիվ դժվարությունների, բայց բռնել է ժամանակի քննությունը», նշել է նա:**

**Հանդիսությունը վարելու է Ինգլվուդից (Նյու Ջերսի) դոկս. Րաֆֆի Հովհաննիսյանը: Գեղարվեստական բաժնում մասնակցելու են Էլիզաբեթ Գալֆայանը (թավջութակ) ու ջազային կատարումների անզուգական երգչուհի Տաթեւիկ Հովհաննիսյանը:**

# Շվեյցարիայի ՀԲԸՄ-ն մեծարում է «Թոփալյան» հիմնադրամի երկարամյա ղեկավարներին



**Հայկական համայնքին ցուցաբերած իրենց երկարամյա նվիրվածության եւ ակնառու ծառայությունների համար ՀԲԸՄ-ի Շվեյցարիայի մասնաճյուղը ապրիլի 29-ին Ժնեւում հատուկ հանդիսությամբ մեծարել է «Թոփալյան» հիմնադրամի ղեկավարներին՝ ատենապետ Էդմոնդ Փիլոսյանին եւ փոխատենապետ Անի Մեսրոպյանին: Նրանց ՀԲԸՄ-ի պատվավոր անդամի կարգավիճակ է շնորհել անձամբ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը, իր խոսքում ընդգծելով հատկապես 1924-ին հիմնադրված եւ այժմ Վահե Գաբրաշի ղեկավարությամբ գործող Շվեյցարիայի մասնաճյուղի դերը այդ տարածաշրջանի հայապահպանական գործունեության ասպարեզում: Նա նաեւ գովասանական խոսքեր է հղել «Թոփալյան» հիմնադրամի վարչության բոլոր անդամների հասցեին՝ վեր հանելով նրանց անձնուրաց աշխատանքը:**

**Հանդիսությանը ներկա են եղել Վահե Գաբրաշը, Արիս Ադամյանը, Երվանդ Զորյանը եւ այլ վարչական անդամներ:**

Հ. Ծ.

# Ակտիվ համայնքում, միասին աշխարհում

## Շարունակվում է Active Citizens ծրագիրը

Բրիտանական խորհրդի Active Citizens ծրագրի շրջանակում Վայոց ձորի մարզի կարիքների ու խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր են իրականացվելու: Դրանք նախաձեռնողը մարզի երիտասարդներն են, եւ ծրագրերն իրականացվելու են Բրիտանական խորհրդի ֆինանսավորմամբ: Վայոց ձորում Active Citizens ծրագիրը մեկնարկել է անցյալ տարի, մարզում գտնվող Եղեգիս գյուղի Զորաց եկեղեցին ու եւս 5 եկեղեցի տեղի երիտասարդների ուշադրության կենտրոնում հայտնվեցին, երբ մեկնարկեց Active Citizens ծրագրի երկրորդ փուլը:

Մայիսի 11-ին Վայոց ձորի երիտասարդները ձեռնամուխ էին եղել Զորաց եկեղեցու շրջակայքի մաքրման աշխատանքներին, որն Active Citizens ծրագրի շրջանակում անցկացվող 6 միջոցառումներից մեկն է: Բացի երիտասարդներից՝ ամսի 11-ին եկեղեցու շրջակայքում կազմակերպված ծառատունկին մասնակցում էին նաեւ Եղեգնաձորի հոգեւոր հովիվ Վազգեն քահանա Հովհաննիսյանը եւ Միացյալ Թագավորության Բրեդֆորդ համայնքի ներկայացուցիչները: Ի դեպ, հուլիսին էլ հայ երիտասարդներն են մեկնելու Բրեդֆորդ՝ ծանոթանալու համայնքի բնակիչների նախաձեռնություններին՝ այսպիսով կապ հաստատելով Հայաստանի ու Միացյալ Թագավորության երկու համայնքների միջեւ:



Բրեդֆորդ համայնքի ներկայացուցիչներից **Փոլ Բրիտչը**, խոսելով մեր երկրում իր ստացած տպավորություններից, ասում է, որ հիացած է Հայաստանի բնաշխարհով ու մշակութային ժառանգությամբ. «Մենք այստեղ ենք, որպեսզի կապեր հաստատենք Բրեդֆորդի ու Եղեգնաձորի միջեւ եւ ծանոթանանք համայնքային կյանքում դերակատարություն ունենալու միմյանց հնարավորություններին»:

Զորաց եկեղեցին գտնվում է Եղեգիսի արեւելյան եզրին, կառուցվել է 14-րդ դարում: Պատերազմ մեկնելուց առաջ հայ մարտիկներն այս եկեղեցում են օրհնանք ու հաղորդություն ստացել: Նույնիսկ պատմում են, որ սա այն եզակի եկեղեցին է, որտեղ զինվորները հնարավորություն են ունեցել ձիերով մոտենալ խորանին ու օրհնություն ստանալ:

Վայոց ձորի երիտասարդների նախաձեռնությամբ այստեղ կազմակերպվելու են փայտամշակման դասընթացներ, շախմատի ակումբ, Եղեգնաձորում բացվելու է մանկական այգի, տեղադրվելու են նոր աղբամաններ ու ցուցանակներ, թարմացվելու են Վայքում գործող պարի խմբակի սաների հագուստները:

Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Արեւիկ Սարիբեկյանի** փոխանցմամբ՝ Active Citizens ծրագրի նպատակն է հայ երիտասարդներին տալ այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են համայնքում ակտիվ գործունեություն ծավալելու համար:

Active Citizens ծրագրի մասնակից երիտասարդները մասնակցել են դասընթացների, այնուհետեւ ձեռնամուխ են եղել արդեն սեփական ծրագրերի իրականացմանը:

Active Citizens-ն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի եւ «Աշխատանք ու հայրենիք» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ի. Պ.

ԱԴՐԲԵՋԱՆ

# Կողմնորոշվելու, իսկ ավելի ճիշտ՝ փոխվելու խնդիր

Երբ մի երկրում ձերբակալվում է 5ամյա աղջնակ, որը պարզապես քաղաքի այգում մոր ձեռքը բռնած «ազատություն» է բղավում, ապա զարմանալ ամենեւին պետք չէ, որ նույն այդ երկրում, ի թիվս այլ լրատվամիջոցների, փակվում են «Ազատություն» եւ «Ազատ Եվրոպա» ռադիոկայանների կայքերը:

Հինգշաբթի երեկոյան Եվրոխորհրդարանը բանաձեւ ընդունեց Ադրբեջանում մարդու իրավունքների եւ խոսքի ազատության վերաբերյալ: Բանաձեւը բավականին կոշտ է, մասնավորապես՝ եվրոպական խորհրդարանը կոչ է անում ադրբեջանական իշխանություններին ազատ արձակել վերջին հանրահավաքների ժամանակ ձերբակալված ընդդիմադիրներին, երիտասարդ ակտիվիստներին ու բլոգերներին, ինչպես նաեւ հարգել իր իսկ վավերացրած կոնվենցիաները խոսքի ու հավաքների ազատության վերաբերյալ: «Իրավիճակն այդ երկրում իսկապես բավական մտահոգիչ է», ըստ «Ազատություն» ռադիոկայանի, բանաձեւի քննարկումների ժամանակ հայտարարել է բրիտանացի պատգամավոր **Չարլզ Թաննոքը**՝ հավելելով. «Այժմ մենք լսում ենք հաղորդագրություններ լրագրողների եւ ընդդիմադիրների նկատմամբ հարձակումների ու բռնությունների մասին: Սա նոր զարգացում չէ, այնուամենայնիվ, եւս մեկ անգամ հիշեցնում է մեզ Ալիեւի վարչակազմի իրական դեմքը: Թեեւ այդ երկիրը պարտավորություններ է ստանձնել ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը հավատարիմ լինելու վերաբերյալ, այնուամենայնիվ, իրականությունը բոլորովին այլ է: Ադրբեջանը բյուրավոր նավթադոլարներ է ծախսում՝ ապացուցելու միջազգային հանրությանը, որ ժողովրդավար է, սակայն մենք այդ խայծը կուլ չենք տա»: Իր հերթին հոլանդացի պատգամավոր **Սչակե Մարիետյեն**, կոչ անելով Եվրոմիությանը առավել խիստ արձագանքել գործընկեր երկրներում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության խախտումներին, ընդգծել է. «Վախի, սպառնալիքի ու ճնշումների այս մթնոլորտին պետք է վերջ դրվի»:

Ի դեպ, ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում իր փոքրիկ տանն այժմ գիտական գործունեությամբ զբաղվող 83-ամյա Ջին Շարփը, որին միջազգային մամուլն անվանում է «արաբական աշխարհում շարունակվող հեղափոխությունների ոգեշնչող», իր աշխատությունների, օրինակ՝ «Բռնապետությունից դեպի ժողովրդավարություն» գրքի համար, դեռեւս այս տարվա փետրվարին պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի հարցին, ասել էր. «Երբ մարդիկ այլեւս չեն վախենում, բռնապետությունը մեծ վտանգի մեջ է»: Այս ֆոնում, անշուշտ, Եվրոխորհրդարանի հոլանդացի պատգամավոր Մարիետյեի դիտարկումը հասկանալի է: Ինչեւէ. երեկ երեկոյան Եվրոխորհրդարանի «ադրբեջանական» քննարկումներից առանձնացնենք նաեւ նույն Մարիետյեի խոսքերը, որ «Ադրբեջանի իշխանությունները կորցնում են իրենց վստահությունը», իսկ թե ինչ է լինում այն ժառանգական իշխանությունների հետ, որոնք Արեւմուտքի աչքում կորցնում են վստահությունը, վերջին ամիսներին բոլորս ականատես եղանք: Հոլանդացի պատգամավորը նկատել է նաեւ, որ «Եվրոպան նույնպես կորցնում է իր վստահությունը, երբ չի արձագանքում այս խախտումներին: Դրանք հստակ հետեւանքներ պետք է ունենան Եվրոմիության եւ Ադրբեջանի հարաբերությունների վրա»:

Հետաքրքրական զուգադիպությամբ, ավելի վաղ՝ մայիսի 10-11-ը Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում տեղի ունեցավ «Ազատության» հերթական ֆորումը: Ադրբեջանական «Թուրան»-ի տեղեկացմամբ՝ ֆորումին Ադրբեջանը ներկայացրել է Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում գործող «Ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության ժողովրդավարության զարգացման ղեկավար, «Ռաֆտո» հեղինակավոր միջազգային մրցանակի դափնեկիր Մալախատ Նասիբովը: Օսլոյի ֆորումի ոչ միայն անվանումը, այլեւ այնտեղ Ադրբեջանի ներկայացուցչի հասցեն վկայում են միայն Բաքվի ունեցած ահռելի խնդիրների բարձրաձայնման մասին: Մանրամասնենք, որ ֆորումի ներկայացուցիչները Ադրբեջանի մասով ծանոթացել են Նախիջեւանում մարդու ազատության եւ իրավունքների իրավիճակի մասին պատմող լուսանկարների եւ տեսանյութերի: Կրկին անդրադառնալով Եվրոխորհրդարանի ընդունած բանաձեւին, նշենք, որ «լրիվ պատահականությամբ» դրա տեքստը ԵԽ-ի պաշտոնական կայքում զետեղվեց մայիսի 10-ին: Ճիշտ այդ օրը «ամբողջ Ադրբեջանը» տոնում էր «առաջնորդ, ադրբեջանական պետություն ստեղծող» Հեյդար Ալիեւի ծննդյան օրը: Ալիեւ որդին հոր ծննդին առավել մեծ շուք տալու նպատակով այդ օրը կազմակերպում է նաեւ «Ծաղիկների տոն»: Ադրբեջանական «Ազադլիգը», ի դեպ, բոլորովին այլ անվանում է գտել. «Ստրուկների տոն». «Ադրբեջանի շարքային քաղաքացին ստրկորեն ենթարկվում է ավտորիտար ռեժիմին: Ենթարկվելու պատճառները վախը եւ հանապազօրյա հացից չկտրվելու ցանկությունն են: Այսօր Ադրբեջանում ստեղծվել է մի քաղաքական համակարգ, որը նման է տոտալիտար երկրների համակարգերին: Պետական բարձր մակարդակով նշվում է ավագ Ալիեւի ծննդյան օրը, ինչն ավելի շատ անձի պաշտամունք է հիշեցնում: Տեղադրվում են հուշարձաններ, անվանակոչվում են դպրոցներ, անգամ Բաքվի միջազգային օդանավակայանը կրում է նրա անունը: Դա խորհրդանշական է, քանի որ ով վայրէջք կատարի Հեյդար Ալիեւի անվան օդանավակայանում, անմիջապես կհասկանա, թե ում է պատկանում այս երկիրը»:

«Ազադլիգը», «շնորհավորելով եւս մեկ անգամ առաջնորդի ծննդյան տոնը», փաստում է. «Ադրբեջանցի ժողովրդի լայն մասսաները չեն ընդունում Հեյդար Ալիեւի անձի պաշտամունքը, քանի որ նրա կառավարման ժամանակաշրջանը համընկավ երկրի առջեւ ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերներում պարտությունների հետ: Հասարակ ժողովրդի համար խորթ է քրդական ծագում ունեցող «ալիեւյան կլանի» շքեղ կյանքը համատարած աղքատության պայմաններում»: Ադրբեջանական պարբերականը՝ ավելի վաղ, անդրադառնալով Եվրոխորհրդարանում «ադրբեջանական բանաձեւի» քննարկմանը, նկատել էր բավական ուշագրավ մի հանգամանք: Ադրբեջանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության հարցը եվրոպացի պատգամավորները քննարկել են Բելառուսի եւ Շրի Լանկայի նույն հարցերի հետ համատեղ: «Նշված երկրների հետ (Բելառուս, Շրի Լանկա-Հ. Ա.) նույն հարթությունում «քննարկվելը» լուրջ ազդանշան է Ադրբեջանի իշխանությունների համար: Մասնավորապես Բելառուսը գտնվում է եվրոպական կառույցների լուրջ պատժամիջոցների տակ (Բելառուսին վերջերս դուրս հրավիրեցին՝ ԵՄ «Արեւելյան գործընկերությունից», որի անդամ է նաեւ Ադրբեջանը-Հ. Ա.): Այդ երկրի պաշտոնյաների մուտքը Եվրոպա արգելված է: Ադրբեջանական կառավարության դեմ նման պատժամիջոցներ կիրառելու հնարավորությունն արդեն մի քանի անգամ քննարկվում է: Այժմ Ադրբեջանի հարցը Բելառուսի հետ քննարկման դնելը հենց դրա վկայությունն է», գրում է ադրբեջանական թերթը՝ կարեւոր հավելումով. «Ի տարբերություն Բելառուսի, Ադրբեջանի չինովնիկները շատ ավելի մեծ եւ բազմաթիվ բիզնես թելերով են կապված Եվրոպայի հետ: Հետեւաբար՝ նման պատժամիջոցների ու քաղաքական սահմանափակումների դեպքում ադրբեջանցի չինովնիկները կարող են կանգնել նաեւ լուրջ ֆինանսական խնդիրների առաջ»: Դե իսկ այն, որ Ալիեւ կրտսերը բավական սերտ, մտերմիկ հարաբերություններ ունի Բելառուսի նախագահ Լուկաշենկոյի հետ, մենք գիտենք նաեւ այն հանգամանքից, որ Մինսկի համալսարանի պատվավոր դոկտոր են երկու հոգի՝ Իլհամ Ալիեւն ու...Մուամար Քադդաֆին՝ ի դեպ: Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանությունը, վերջին ամիսների հայտնի «արաբական դեպքերից» հետո լայն թափով սկսեց հակակոռուպցիոն գործողություններ: Ադրբեջանական հակակոռուպցիոն շոուն բրիտանական The Economist-ը «իմիտացիա» է որակավորել: Պարբերականը, մեջբերելով Transparency international կազմակերպության զեկույցը, արձանագրում է, որ կոռուպցիայի մակարդակով Ադրբեջանը Զիմբաբվեի հետ կիսում է աշխարհում 134-րդ տեղը. «Ալիեւն ու նրա շրջապատը մեծաքանակ կապիտալ են ձեռք բերում երկիր մտնող եկամուտներից: Եկամուտների մի փոքր մասն էլ ծախսում են որոշ ենթակառուցվածքային նախագծերի վրա: Այսպիսի կառավարման մեթոդը երկար ժամանակ չի կարող շարունակվել», գրում է The Economist-ը: Այս ամենի մասին բարձրաձայնում է հատկապես Բաքվի «իշխող ընտանիքի» հետ ամուր կապեր ունեցող Բրիտանիայի պարբերականներից մեկը:

Ինչեւէ, Ադրբեջանում հետաքրքրական իրադարձությունները շարունակվում են: Ադրբեջանում շարունակում են նաեւ այդ հետաքրքրական իրադարձությունները բարձրաձայնողներին ձերբակալել: Ըստ միջազգային տվյալների՝ հարեւան երկրում 7 տասնյակի հասնող քաղբանտարկյալներ կան: Ադրբեջանական ընդդիմությունը խոսում է 100-ից ավելիի մասին: Ուշագրավ է, որ նրանց մեծամասնությունը, «փաստորեն», թմրամոլ են: Ժամանակը չէ՞ արդյոք որ Բաքուն կողմնորոշվի, թե ի՞նչ երկիր է վերջապես՝ ազատ խոսքը բռնաճնշո՞ղ, թե՞ թմրամոլների. երկուսն էլ պաշտոնապես հերքվում են, բայց Բաքվի հրապարակներում միանգամից տասնյակներով մարդկանց ձերբակալելը «ազատություն» բառի համար խոսում է առաջինի, իսկ հետագայում՝ միայն ոստիկանությունում նրանց գրպանում թմրանյութ հայտնաբերելը՝ երկրորդի մասին: Ամեն դեպքում՝ ընտրությունը, իսկ ցանկալի է՝ փոփոխությունը, Բաքվինն է:

Իսկ մինչ այդ՝ նորից ընթերցենք 15,2 տոկոսով Թուրքիային պատկանող Euronews-ի դիտարկումը. «Մարդիկ դեմ են նախագահական աթոռն իր հորից ժառանգած Իլհամ Ալիեւի իշխանությանը»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԹԵԺ ԿԵՏԵՐ

# Թալիբների «վրիժառության առաջին գործողությունը» Պակիստանում



Երեկ առավոտյան Պակիստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող ոստիկանական ակադեմիայի տարածքում որոտացել է երկու հուժկու պայթյուն: Ռոյթեր գործակալության տվյալներով, կան 80 սպանված եւ 100 վիրավոր: Պայթյուններից մեկն իրականացրել է մահապարտ ահաբեկիչը, մյուսի դեպքում օգտագործվել է ականված ավտոմեքենա:

«Թալիբան» արմատական իսլամիստական շարժման պակիստանյան բաժանմունքը ստանձնել է երկու ահաբեկչությունների պատասխանատվությունը: Թալիբները հայտարարել են, որ պայթյունները «վրիժառության առաջին գործողությունն» են «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի «նահատակության» դիմաց, եւ սպառնացել են նոր, էլ ավելի խոշոր ահաբեկչություններ իրականացնել Պակիստանում եւ Աֆղանստանում:

Ամերիկացիները բեն Լադենին սպանեցին մայիսի լույս 2-ի գիշերը Պակիստանի Աբբոթաբադ քաղաքում եւ նրա դին նետեցին ծովը: Թալիբները խոստացան ԱՄՆ-ից եւ Պակիստանից վրեժ լուծել բեն Լադենի մահվան համար, ընդգծելով, որ իրենց առաջնահերթ թիրախները լինելու են Պակիստանի նախագահ Ասիֆ Ալի Զարդարին եւ բանակի ներկայացուցիչները, երկրորդ թիրախը՝ ԱՄՆ-ը:

# Ճապոնիան կանգնեցնում է «Համաոկա» ԱԷԿ-ը

Ճապոնական «Համաոկա» ատոմակայանում սկսվել են 4-րդ ռեակտորի կանգնեցման աշխատանքները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով ԱԷԿ-ի օպերատոր Chubu Electric Power ընկերության ղեկավարությանը:

Վերջինիս տվյալներով, ուրբաթ օրը էլեկտրաէներգիայի արտադրությունը դադարեցվել է: Ռեակտորը փոխադրվել է «սառը կանգնեցման» վիճակի:

Կայանում կա 5 ռեակտոր, բայց գործող են միայն 4-րդը եւ 5-րդը: 1970-ականներին կառուցված 1-ին եւ 2-րդ ռեակտորները փակվել են 2009-ին, 3-րդը ներկայումս պլանային զննության է ենթարկվում: 5-րդ ռեակտորի կանգնեցման գործընթացը սկսվելու է մայիսի 14-ին:

Անցյալ շաբաթ Ճապոնիայի վարչապետ Նատո Կանը կոչ էր արել կանգնեցնել «Համաոկայի» բոլոր ռեակտորները: ԱԷԿ-ը գտնվում է վտանգավոր գոտում. շատ հավանական է, որ առաջիկա 30 տարում կայանի գոտում տեղի ունենա 8 մագնիտուդով երկրաշարժ: Կառավարությունը կարգադրել է կայանը պաշտպանել բնական աղետներից: Մասնավորապես ամբարտակ կկառուցվի ԱԷԿ-ը ցունամիից պաշտպանելու նպատակով:

«Համաոկան» գտնվում է Տոկիոյից 200 կմ հարավ-արեւմուտք: Տեղական ԶԼՄ-ների գնահատումների համաձայն, կայանի աշխատանքը կդադարեցվի առնվազն երկու տարով: Դրա հետեւանքով Ճապոնիայի կենտրոնական մասում էլեկտրաէներգիայի պակաս կզգացվի:

Ճապոնիայում ատոմակայանները տալիս են էլեկտրաէներգիայի մոտ 30 տոկոսը: Մարտի 11-ի ցունամիից հետո երկրի 55 ատոմակայաններից 11-ը աշխատանքը դադարեցրեց կամ փակվեց:

# Իսլամիստ առաջնորդն ուզում է դառնալ Եգիպտոսի նախագահ

Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման ղեկավարներից մեկը՝ Աբդել Մոնեիմ Աբուլ Ֆոթուհը հայտարարել է, որ մտադիր է իր թեկնածությունն առաջադրել երկրի նախագահական ընտրություններում: Այդ մասին հաղորդում է «Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը:

Աբուլ Ֆոթուհի հայտարարությունը ներհակ է շարժման պաշտոնական քաղաքականությանը, որն ավելի վաղ քանիցս հայտարարել էր ընտրություններում սեփական թեկնածու չառաջադրելու մտադրության մասին: «Մուսուլման եղբայրների» ղեկավարությունը ներկայումս քննարկում է Աբուլ Ֆոթուհին կազմակերպությունից հեռացնելու հնարավորությունը (եթե նա ինքը չհեռանա):

«Մուսուլման եղբայրներ» շարժման մեջ Աբուլ Ֆոթուհը ղեկավար պաշտոններ է զբաղեցնում 1987-ից: 1996-2001 թթ. նա բանտարկված էր իր համոզմունքների համար:

Նախագահ Հոսնի Մուբարաքի օրոք Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» գործունեությունը պաշտոնապես արգելված էր, սակայն կազմակերպությունը վայելում էր բնակչության զգալի մասի պաշտպանությունը: 2011-ի հունվար-փետրվարյան զանգվածային հուզումների ժամանակ երկյուղներ էին արտահայտվում, որ իսլամիստները կարող են զավթել երկրի իշխանությունը: «Մուսուլման եղբայրները» մտադիր են մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Հատկապես քաղաքական պայքարի համար հիմնվել է իսլամիստների «Ազատության եւ արդարության կուսակցությունը»:

Եգիպտոսում 30 տարի իշխած Մուբարաքը 2011-ի փետրվարին ստիպված հրաժարական տվեց: Իշխանությունն անցավ ժամանակավոր կառավարության ձեռքը: Սեպտեմբերին նշանակված են խորհրդարանական ընտրություններ, իսկ հետո՝ նախագահի ժողովրդավարական ընտրություններ: Նախագահ դառնալու մտադրություն ունեն նաեւ ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար Մոհամմեդ էլ Բարադեյը եւ Արաբական պետությունների լիգայի ղեկավար Ամր Մուսան:

ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ

# Թանգարանների գիշեր-2011

Եվրոպայի խորհրդի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո անցկացվող «Թանգարանների գիշեր» խորագիրը կրող տոնը բոլորել է իր առաջին տասնամյակը։ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, փոխնախարար Արեւ Սամուելյանը եւ Ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեցին մեր հանրապետությունում անցկացվող միջոցառումներին։ ՀՀ մշակույթի նախարարությունը, միանալով Եվրոպական մշակութային կոնվենցիային, արդեն 7-րդ անգամ, հանրապետության բոլոր մարզերից շուրջ 60 թանգարաններ մայիսի 14-ին, ժամը 18.00-24.00-ն իր հյուրընկալ դռները անվճար կբացեն այցելուների առջեւ եւ գարնանային տոնական տրամադրությամբ, հատկապես գիշերասեր երիտասարդության ուշադրությունը կհրավիրի թանգարանային հավաքածուներին, կբարձրացնի նրանց իրազեկվածությունն ու կնպաստի առավել լավ ճանաչելու սեփական արմատները։

Այս տարի մեր երկրի կարգախոսն է՝ «Գրավոր հիշողություն», որի ներքո անցկացվող բոլոր միջոցառումները նվիրվում են գրավոր ժառանգությանն ու հայ գրատպության 500-ամյակին։ Մայիսի 14-ին բոլոր թանգարանները հանդես կգան հատուկ տոնական միջոցառումներով ու միաժամանակյա աշխատաժամով՝ նորովի ներկայացնելով իրենց հավաքածուների բացառիկ արժեքները։ Նախարարը նշեց, որ տարեցտարի մեծանում ու ավելանում է «Թանգարանների գիշեր» ակցիային մասնակիցների ու հետաքրքրվողների թիվը։ Եթե 2009-ին ակցիային մասնակցել են հայաստանյան 26 թանգարաններ, ապա այս տարի այդ թիվը հասել է 60-ի։ Նշենք, որ մայիսի 14-ին եւ 18-ին (Թանգարանների միջ. օրը) բոլոր թանգարանները կգործեն անվճար։ Իսկ այն 100 այցելուները, ովքեր կհասցնեն ակցիայի ժամերին հաճախել շատ թանգարաններ եւ ստանալ համապատասխան նշումով կտրոն, կարժանանան նախարարության կողմից սահմանած մրցանակներին, տեղեկացրեց նախարարը։ Պատասխանելով լրագրողների հարցերին Հասմիկ Պողոսյանն ասաց, որ մինչեւ 2012 թ. կվերանորոգվեն Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանը ու նաեւ Ազգային պատկերասրահի Էջմիածնի ու Սիսիանի մասնաճյուղերը։ «**Ազգի**» հարցին պատասխանելով նախարարն ասաց, որ թանգարանների պահոցներում եղած ֆոնդերն ամբողջովին հնարավոր չէ ցուցադրել շենքային տարածքների պատճառով։ Եվ հուրախություն մեզ նշեց, որ հանրապետության նախագահը խոստացել է նոր մեկ մեծ թանգարանի շենք կառուցել։ Անդրադառնալով «**Ազգի**» մյուս հարցին նախարարն ասաց. «Մարկոս Գրիգորյանի հավաքածուները ներկայացնելու համար պետությունը եղած բազայի վրա արել է առավելագույնը եւ 700 քմ տարածքից 300 քմ հատկացրել է Մարկոսի հավաքածուների ցուցադրությանը եւ երաշխավորում է բոլոր արժեքները։ Իսկ տուն-թանգարան ստեղծելու համար ժառանգների կողմից չի եղել գրավոր առաջարկ՝ ինչպես ընդունված է...»։

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Հողեղեն գույների երգը»

Երեկ «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնի «Արծիվ» սրահում բացվեց Հակոբ Հակոբյանի գեղանկարչական աշխատանքների եւ քանդակների ցուցահանդեսը՝ «Հողեղեն գույների երգը» խորագրով։ Ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը։ Ցուցահանդեսի մթնոլորտը բացառիկ էր՝ մտավորական ընտիր շրջանակի ներկայությամբ։ Գնահատական խոսքով ելույթ ունեցավ Շահեն Խաչատրյանը։

Ցուցահանդեսի առիթով տպագրված է կատալոգ։ Ստեղծագործական հավաքածուն Վարպետի ապրումների ու մտորումների գեղանկարչական փայլուն արտահայտություն է՝ մեզ ծանոթ եւ անծանոթ, յուրաքանչյուր նոր դիտումի համար անակնկալ հարուցող։

Հետագայում ավելի հանգամանորեն կանդրադառնանք ցուցահանդեսին։

Մ. Բ.

# Նոր ներկայացում

Սան Ֆրանցիսկոյից այս օրերին Հայաստանում գտնվող դերասանուհի Մարի Ռոզ Աբուսեֆյանը նոր անակնկալ է պատրաստել հանդիսականի համար։ Երկուշաբթի օրը Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում նա հանդես կգա Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» վեպի բեմականացմամբ։ 20 դերակատարների մենակատարումով վեպը նա ներկայացրել է տարբեր բեմերում՝ սեփական բեմադրությամբ եւ երաժշտական ձեւավորմամբ։

# «Առաջին Էրեբունի-Երեւանը. ռետրոսպեկտիվ» ցուցադրությունը Էրեբունի թանգարանում

«Թանգարանների եվրոպական գիշերը» իրականացվում է 2005 թվականից՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպայի խորհրդի, իսկ այս տարի՝ նաեւ ԻԿՕՄ-ի բարձր հովանու ներքո։

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանն արդեն 7-րդ անգամ կկանգնի եվրոպական մեծ ու փոքր թանգարանների կողքին՝ արձագանքելով այդ նախաձեռնությանը։ Արգելոց-թանգարանը մասնակցում է նաեւ «Մեկ ցուցանմուշ, մեկ պատմություն» էլեկտրոնային ինտերակտիվ ցուցահանդեսին՝ համացանցի միլիոնավոր այցելուների ներկայացնելով 1959 թ. Էրեբունի միջնաբերդից հայտնաբերված «Նժույգը որսից հետո» որմնանկարը։

Թանգարանների միջազգային օրվա առթիվ ԻԿՕՄ-ի կողմից առաջարկվող «Թանգարանը եւ հիշողությունը» կարգախոսին ընդառաջ՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կմիանա «Թանգարանների եվրոպական գիշեր» նախաձեռնությանը՝ «Առաջին Էրեբունի-Երեւանը. ռետրոսպեկտիվ» միջոցառմամբ։ Այդ առթիվ նախատեսում է հանդիպում 1-ին «Էրեբունի-Երեւան» միջոցառման կազմակերպիչների հետ։ Երեկոյին իր մասնակցությունը կբերի Հայաստանի ակադեմիական երգչախումբը, գեղղեկ եւ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ, որի կատարմամբ թանգարանի առջեւի հարթակում կհնչի Երեւանի հիմնը՝ «Երեւան-Էրեբունին»։

Միջոցառման նպատակն է արգելոց-թանգարանի գիշերային այցելուներին փոխանցել ոչ միայն 1968-ի հոկտեմբերյան Երեւանի տոնական շունչը, այլ նաեւ հազարամյակների խորքից եկող Երեւանի ուղերձը. լինել հնամենի քաղաքի բնակիչ, ավելի հին հավերժական քաղաք Հռոմից, չի նշանակում միայն ապրել այդ քաղաքում։ Դա նշանակում է նաեւ լինել սեփական քաղաքի պատմության մեկնաբանը եւ այդ պատմության կերտման նորօրյա մասնակիցը։

Մ. Մ.

# Պարտք եւ նվիրում

Հազվադեպ է աշխատանքային առօրյան հոգեկան բավարարության վերածվում. երբ սիրածդ գործով ես զբաղվում, տաղտուկ չի սպառնում։ Այդպիսին է **Սեւան Տեյիրմենճյանի** աշխատանքը Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթում, որտեղ նա խմբագիր եւ գրական աշխատող է միաժամանակ։ Իր կերպարը արեւմտահայ գրականությունից ու մամուլից մեզ ծանոթ անցած դարասկզբի պոլսահայ մտավորական միջավայրն է հիշեցնում։ Իր հետաքրքրությունները, վերաբերմունքները գրի-մշակույթի մարդու այդպիսին են եւ այնքան բնական, որ կյանքը ուրիշ ճանապարհ չէր կարող ընտրել նրա համար։ Տունը մոտ էր խմբագրությանը, թերթի հայկական մթնոլորտը ձգում էր իրեն ու հաճախ այնտեղ պահում. առաջին հոդվածը 14 տարեկանում տպագրվեց ու այդպես շարունակվեց մինչեւ հիմա։ Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետը եւ ասպիրանտուրան ավարտելուց հետո նա վերադարձավ եւ աշխատանքի անցավ «Ժամանակ» օրաթերթի խմբագրությունում, որտեղ խմբագրական-լրագրական գործերին զուգահեռ նաեւ գրականագիտական պրպտումներ է անում։ Հավաքչական այն աշխատանքները, որ տարիներ արդեն կատարում է նա, արեւմտահայ մամուլում սփռված հայտնի եւ անհայտ գրողների գործերի ժառանգության ամբողջացմանն ու հրատարակմանն է ուղղված։ Այդ ժառանգությունը մոռացության չտալու, նրանց վաստակի հանդեպ հարգանքի, երախտիքի ծնունդ էր արեւմտահայ ամենաինքնատիպ բանաստեղծներից մեկի՝ Եղիա Տեմիրճիպաշյանի «Հրայրք մութին» ժողովածուի լույս աշխարհ գալը Ստամբուլում, որի աշխատանքներին մասնակցեց նաեւ Հայաստանից Սիրանուշ Դվոյանը։ Հաջորդը, որ նախաձեռնեց Սեւան Տեյիրմենճյանը փարիզահայ գրող, գրականագետ Գրիգոր Պլըտյանի հետ, Զապել Եսայանի՝ 1895-1908 թվականների մամուլում տպագրված գեղարվեստական արձակ գործերի ժողովածուն էր՝ «Սկիւտարի վերջալույսները» խորագրով։ Երկու տարի առաջ Ստամբուլում հրատարակեց «Ժամանակ» թերթի հիմնադիր-խմբագիր Միսաք Գոչունյանի «Կեանքի տեսարաններ» հատորը։ Այս ծրագիրը մտահղացվել էր գրականագետ Գրիգոր Հակոբյանի հետ միասին։ Ցավոք, նա չհասցրեց դրա իրագործումը տեսնել. կյանքից վաղաժամ հեռացավ։ «Նա իմ ուսուցիչը չի եղել, բայց ես ինձ համարում եմ իր ուսանողը։ Գրիգոր Հակոբյանը փափագում էր տպագրված տեսնել Միսաք Գոչունյանի «Կրակին մէջէն» վեպը։ Ինքը, ցավալիորեն, շուտ լքեց մեզ։ Ես դա ամբողջացրի, պարտքս էր, որով եւ կատարվեց գրականագետի կտակը»։

Միսաք Գոչունյանի «Կրակին մէջէն» վեպը որպես թերթոն տպագրվել սկսվեց իր հիմնադրած «Ժամանակ» օրաթերթի հենց առաջին համարից՝ 1908-ի հոկտեմբերի 26-ից մինչեւ 1909 թ. մարտ ամիսը։ Ամբողջական գրքով հրատարակվեց 100 տարի անց, Երեւանում 2010-ին, «Տիգրան Մեծ» տպագրատանը, տնօրեն Վրեժ Մարկոսյանի մեկենասությամբ, նվիրված «Ժամանակ» թերթի 100-ամյակին։ Հատորը հրատարակության է պատրաստել Սեւան Տեյիրմենճյանը, հավաքել-ամբողջացրել վեպի բոլոր հատվածները, կատարել տեղանունների ծանոթագրությունները, ուղղագրություն-կետադրությունը համապատասխանեցնել ժամանակակից լեզվական պահանջներին, հեղինակել գրքի առաջաբանը։

Անցյալի ժառանգության նկատմամբ հարգանքը եւ գրահրատարակչական գործի սերն է նրան մղում խորամուխ լինելու անցյալի մամուլի էջերում, հատ-հատ հավաքել ամենատարբեր թերթերում սփռված նմուշներ. աշխատատար եւ ժամանակատար մի գործ, որ ինչպես ինքն է վկայում, շատ հաճախ պակասավոր է լինում։ Հայաստանի ազգային գրադարանում, որի արխիվներից նա օգտվել է, թերթի մեկ համարի բացակայությունն արդեն խոչընդոտ էր գրքի հրատարակության համար։ Այդ պակասավոր հատվածը հայթայթվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության մամուլի արխիվներից։ Հետաքրքրական է, որ ավելի ուշ նա դա գտել է Ստամբուլի ազգային գրադարանում։

**- Անդրադառնանք «Կրակին մէջէն» վեպին։ Ժանրային ինչ առանձնահատկություններ են բնորոշ թերթոն-վեպին։**

- Թերթոն-վեպը ամենօրյա թերթում հաջորդաբար տպագրվող գործեր են, որոնց բնորոշ է իրական եւ հորինվածքային շարադրանք՝ ամենօրյա ընթերցողական հետաքրքրությունը պահպանելու համար ոճային ակտիվ հնարքներ, դետեկտիվի տարրեր պարունակող։ Մամուլում երբեմն շատ տեւական տպագրություն են դրանք ունենում՝ կախված ընթերցողական արձագանքից։

Միսաք Գոչունյանը այդ շրջանի արեւմտահայ գրականության եւ մամուլի պատմության մեջ մեծ դեր է ունեցել թերթոն-վեպ ժանրով։ Ժանրի ամենանշանավոր ներկայացուցիչը Երվանդ Օտյանն էր։ Մինչեւ «Կրակին մէջէն» վեպի՝ «Ժամանակ» օրաթերթում տպագրվելը նա արդեն մի շարք վեպերի հեղինակ էր, որոնք լույս էին տեսնում մամուլում եւ որպես առանձին հատորներ հետագայում հրատարակվեցին («Վրեժխնդիրը, Բախտախնդիրը», «Ժառանգորդը», «Կնճռոտ հանգոյց մը»)։ Զարմանալի է, որ թերթը 1908-ին իր առաջին համարը սկսեց այս վեպի տպագրությամբ։ Ինքը՝ Մ Գոչունյանը, պահպանողական հայացքների տեր անձնավորություն էր համարվում, սակայն դրվատանքով է ներկայացնում հեղափոխական այնպիսի գործողություն, ինչպիսին Բանկ Օտոմանի գրավումն է։ Այս վեպը փաստորեն Բանկ Օտոմանի գրավման եւ 1896-ի պոլսահայ կոտորածների վերաբերյալ գեղարվեստական առաջին երկն է։ Ժամանակի խիստ գրաքննության պատճառով, միայն 1908-ի համեմատական ազատությունը հնարավորություն տվեց հեղինակին հրապարակել այսպիսի վեպ, որ կես-իրական, կես-հորինվածքային սյուժե ունի, հենված վավերական իրողությունների վրա։ Վեպի վեցերորդ գլուխն, իմ կարծիքով, առանցքային է, որտեղ հեղինակը նկարագրում է հայկական թաղամասերում կատարված ջարդերը, որոնց ինքը ականատես է եղել։ Թեեւ Բանկ Օտոմանի գրավումը ներկայացված է փոքր-ինչ վիպականացված, հերոսները բանկ ներս են մտնում իբր փող չեյնջ անելու, մինչդեռ իրականում ուղղակի խուժել եւ ռմբակոծել են, եւ Բաբկեն Սյունին էլ նահատակվել է։

Միսաք Գոչունյանը սիրված եւ ընթերցվող հեղինակ էր եւ ազդեցիկ դեմք՝ Ստամբուլում։ Նա արեւմտահայ ամենատարբեր թերթերին է աշխատակցել («Բյուզանդիոն», «Արեւելեան մամուլ», «Մանզումէի էֆքեար»), արեւմտահայ վիպերգության անվանի դեմքերից է, ազգային-ընկերային կյանքը, մարդկային փոխհարաբերություններ, հոգեբանական վիճակներ ներկայացնող գրող։



**- Եվ ինչպես ինքդ ես գրում գրքի առաջաբանում, 1913-ին երբ մահացավ, Մայր եկեղեցում նրա հուղարկավորությունը տեղի ունեցավ նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանի նախագահությամբ, Եղիշե արք. Դուրյանի ներկայությամբ։ Կերոնակիրների մեջ էին Տիրան Քելեկյանը եւ Վահան Թեքեյանը, դամբանախոսներն էին Մ. Օրմանյանը, Թեոդիկը, Երվանդ Օտյանը։**

**Սեւան, ի՞նչ զգացողություն ես ունենում, երբ թիկունքիդ ունես այնպիսի հարուստ կենսագրություն ու հին պատմություն ունեցող խմբագրատուն, ինչպիսին «Ժամանակ» օրաթերթն է։**

- Մեծ պատասխանատվություն է պահանջում, որովհետեւ նախ՝ ապրում ես մի գաղութում, որտեղ ստեղծագործել են մեծ դասականներ՝ թե քաղաքական մտքի, թե մշակույթի ու գրականության եւ ցավ է տեսնել այդ համայնքը այսօր, որ գրեթե ոչինչ ունի ազգային։

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ.- Միսաք Գոչունյանի «Կրակին մէջէն» գրքի շնորհանդեսը տեղի կունենա այսօր Թեքեյան կենտրոնում, ժամը 14.00-ին։**

# «New Generation»-ի համերգը

**Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունը՝ համագործակցությամբ Գյոթեի ինստիտուտի եւ Գաֆէսճեան արվեստի կենտրոնի, հրավիրում է անսովոր մի համերգի.**

**2011 թ. մայիսի 14-ին՝ շաբաթ, ժամը 20:00-ից Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հատուկ միջոցառումների սրահում ելույթ կունենա «New Generation» կվարտետը՝ ներկայացնելով դասական եւ ժամանակակից երաժշտություն։ Ծրագրում ընդգրկված են կատարումներ Կալղինի, Հենդելի, Չայլդսի եւ այլոց ստեղծագործություններից։**

**Չորս երիտասարդ ֆլեյտահարուհիները, նվագելով չորս տարբեր ֆլեյտաներով, քննադատաբար են մոտենում ունկդրման սովորույթներին եւ կոտրում են դրանք։ Նրանք կարողանում են բացել անսպասելի հնչյունային աշխարհներ եւ շարունակ զարմացնում են իրենց ունկնդրին։ Կվարտետը նվաճել է բազմաթիվ առաջին մրցանակներ եւ մեծ հաջողությամբ բազմաթիվ համերգներ ունեցել ԱՄՆ-ում, Ճապոնիայում, ինչպես նաեւ Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայում։ Այժմ ֆլեյտահարուհիները համերգային շրջագայություն են կատարում Հարավային Կովկասով։ Նրանց առաջին կանգառը Երեւանն է։**

*ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

# Պագանինի եւ Շոստակովիչ

**Մայիսի 14-ին ժամը 19:00-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի է ունենալու Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան, եւ Ն. Պագանինիի անվան ջութակահարների միջազգային մրցույթի հաղթող, աշխարհահռչակ ջութակահար Ֆեն Նինի համերգը։**

## Ծրագիր

**Ն. Պագանինի-ջութակի կոնցերտ No.1**
**Դ. Շոստակովիչ-Ռ. Բարշայ-կամերային սիմֆոնիա**
**Տեղեկությունների համար զանգահարել 010 581171 091589455 հեռախոսահամարներով։**

# Արթուր Աբրահամը խոստացել է հաղթանակած հեռանալ ռինգից

*Աբրահամն ու Ուորդը հավատում են իրենց հաջողությանը*

Մայիսի 15-ի վաղ առավոտյան, Երեւանի ժամանակով ժամը 6-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Կարսոն քաղաքում կսկսվի Super Six մրցաշարի կիսաեզրափակիչ մենամարտը միջինծանրքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամի եւ երկրորդ միջինծանրքաշային կարգի WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, ամերիկացի Անդրե Ուորդի միջեւ:



Մենամարտից առաջ կայացած մամուլի ասուլիսում երկու բռնցքամարտիկները թեեւ հարգանքով են խոսել միմյանց մասին, սակայն վստահ են իրենց ուժերին ու խոստացել են հաղթանակած թողնել ռինգը:

«Հարգում եմ Անդրե Ուորդին, նա տեխնիկապես գրագետ բռնցքամարտիկ է: Սակայն ես այստեղ եմ գտնվում, որպեսզի ոչնչացնեմ նրան: Միջինծանրքաշային կարգից 2-րդ միջինծանրքաշային կարգ տեղափոխվելուց հետո, ինչպես նաեւ Կառլ Ֆրոչից կրած պարտությունից հետո ստիպված էի որոշակի փոփոխություն մտցնել մարտավարությունումս: Այս մրցաշարն ինձ համար հաջող է սկսվել ու հույս ունեմ, որ հաջող էլ կավարտվի:

Ֆիզիկապես ամբողջովին պատրաստ եմ մենամարտին: Մարզչիս հետ մենք լավ մարտավարություն ենք մշակել: Առաջին իսկ ռաունդից գրոհելու եմ, որպեսզի հնարավորություն չտամ նրան ճնշում գործադրելու իմ վրա: Ցանկանում եմ Շմելինգից հետո դառնալ Գերմանիայի առաջին ներկայացուցիչը, որ Ամերիկայում աշխարհի չեմպիոնի տիտղոսը կնվաճի: Խոստանում եմ, որ Ուորդի հետ մենամարտը բռնցքամարտի սիրահարները դեռ երկար կհիշեն: Ինձ այս մենամարտում հաղթողի գլխավոր հավակնորդ չեն համարում, բայց ես կպայքարեմ մինչեւ վերջ: Առաջիկա մենամարտում մենք հաղթանակ կտոնենք», հայտարարել է Արթուր Աբրահամը:

«Հարգում եմ Աբրահամին: Գիտակցում եմ, որ շատ դժվարին ու ծանր մենամարտ է սպասվում: Ցանկանում եմ անվանի բռնցքամարտիկ դառնալ ու չեմպիոնական գոտին պահել Ամերիկայում: Կարծում եմ Կառլ Ֆրոչը ցույց տվեց, թե ինչպես պետք է հաղթել Աբրահամին: Սակայն ես ամեն ինչ իմ ձեւով կանեմ: Անկախ այն բանից, թե Աբրահամն ինչպես է ավարտել իր նախորդ մենամարտը, հանդիպմանը շատ լրջորեն եմ նախապատրաստվել: Բոլոր բռնցքամարտիկներին էլ հարգում եմ ու պատասխանատվությամբ մոտենում նրանց հետ հանդիպումներին», նշել է Անդրե Ուորդը:

Նշենք, որ ամերիկացի բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Նա հաղթել է բոլոր 23 մենամարտերում, որոնցից 13-ը՝ տեխնիկական նոկաուտով: Արթուր Աբրահամը 34 մենամարտ է անցկացրել, որից 32-ում է հաղթել (26-ը՝ տեխնիկական նոկաուտով): Արթուրն ընդամենը 2 պարտություն է կրել, ընդ որում առաջինը՝ որակազրկման պատճառով:

Բուքմեյքերները առաջիկա մենամարտում հաղթողի հավակնորդ են համարում ամերիկացի բռնցքամարտիկին: Նրա հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 1,20 գործակցով: Աբրահամի հաղթանակը գնահատվում է 4 գործակցով: Սակայն 9-րդ ռաունդից հետո մրցակիցների հաղթելու հնարավորությունները գնահատելիս ուժերի հարաբերությունը փոխվում է: Ավելի գերադասելի է համարվում Արթուրի հաղթելու հնարավորությունը՝ այն գնահատելով 1,40 գործակցով: Իսկ ահա Ուորդի համար գործակիցը 2,65 է:

Եվ այսպես, Արթուր Աբրահամը հնարավորություն է ստացել ոչ միայն նվաճելու WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը եւ շարունակելու պայքարը Super Six մրցաշարում, այլեւ վերականգնելու իր մի փոքր սասանված հեղինակությունը: Կառլ Ֆրոչից կրած պարտությունից հետո նրա հասցեին քննադատություն հնչեց, մարզիչն էլ շատ դժգոհ էր Աբրահամից: Հուսանք, որ այս անգամ բոլորը գոհ կլինեն Արթուրից ու նա հաղթանակած կթողնի ռինգը:

# Մեդալներ նաեւ ՌԴ հավաքականի կազմում

Ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնության հերթական օրը Հայաստանից մրցահարթակ դուրս եկան օլիմպիական չեմպիոն Իսրայել Միլիտոսյանի որդին՝ Վարդան Միլիտոսյանը եւ Ռազմիկ Օլթեցյանը՝ մասնակցելով մինչեւ 69 կգ քաշային ծանրորդների մրցավեճին: Նրանց ելույթն այնքան էլ հաջող չէր: Ռազմիկ Օլթեցյանը երկամարտի 281 կգ (127+154) արդյունքով զբաղեցրեց 4-րդ տեղը, իսկ Վարդան Միլիտոսյանը երկամարտի 267 կգ (122+145) արդյունքով հանգրվանեց 8-րդ հորիզոնականում: Ռազմիկը բրոնզե մեդալ նվաճեց հրում վարժությունում: Փոխարենը գերազանց ելույթ ունեցավ Ռուսաստանի հավաքականում հանդես եկած Ռազմիկ Հունանյանը՝ երկամարտի 288 կգ (126+162) արդյունքով հռչակվելով աշխարհի չեմպիոն:




Պոկում վարժությունում Հայաստանի պատվիրակներից ավելի հաջող էր Օլթեցյանի ելույթը, որը հաջորդաբար բարձրացրեց 120, 124 եւ 127 կգ ծանրությունները: Այս արդյունքը 5-րդն էր: Իսկ Վարդան Միլիտոսյանը 2-րդ մոտեցմամբ իրեն ենթարկելով 118 կգ-ը, հաջորդ մոտեցմամբ բարձրացրեց 122 կգ՝ ցույց տալով 8-րդ արդյունքը:

Պոկում վարժության ոսկե մեդալը 136 կգ արդյունքով նվաճեց չինացի Ջիան Տանգը: 2-րդ տեղը գրավեց ղազախ ծանրորդ Ադիլբեկ Բալխաեւը՝ 130 կգ: Բրոնզե մեդալը նվաճեց ռուսաստանցի Սերգեյ Կոլեսնիկովը՝ 128 կգ:

Ռազմիկ Հունանյանը պոկում վարժությունն ավարտեց 126 կգ-ով՝ 10 կգ-ով զիջելով չինացի ծանրորդին: Դա, ինչ խոսք, մեծ տարբերություն էր: Սակայն Հունանյանին հաջողվեց գերազանցել իր հիմնական հակառակորդին ու նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Առաջին մոտեցմամբ բարձրացնելով 153 կգ, Հունանյանը 3-րդ փորձի ժամանակ գլխավերեւում պահեց 162 կգ-անոց ծանրաձողը, ինչը նրան ոսկե մեդալ պարգեւեց թե հրում վարժությունում, թե երկամարտում:

Իսկ չինացին, որ չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդն էր, հրում վարժությունում պարզապես ձախողվեց: Նա միայն 3-րդ փորձից բարձրացրեց նախնական 151 կգ ծանրությունը ու շնորհիվ պոկում վարժությունում ցույց տված բարձր արդյունքի, երկամարտի 287 կգ արդյունքով գրավեց 2-րդ տեղը: Բրոնզե մեդալի արժանացավ ղազախ Ադիլբեկ Բալխաեւը՝ 285 կգ (130+155): Նա 4 կգ-ով գերազանցեց 4-րդ տեղը զբաղեցրած Ռազմիկ Օլթեցյանին: Հայ ծանրորդը վստահ հանդես եկավ նաեւ հրում վարժությունում՝ արդյունավետ օգտագործելով 3 մոտեցումներն էլ (145, 151, 154 կգ): Նա հրում վարժությունում արժանացավ բրոնզե մեդալի: Իսկ Վարդան Միլիտոսյանը միայն առաջին մոտեցումը հաջող կատարելով, 145 կգ արդյունքով հրում վարժությունում 7-րդն էր:

Մինչեւ 58 կգ քաշային աղջիկների մրցավեճում Ռուսաստանը ներկայացնող Անի Սարգսյանը երկամարտի 169 կգ (71+98) արդյունքով արժանացավ բրոնզե մեդալի: Նա բրոնզե մեդալ նվաճեց նաեւ հրում վարժությունում: Աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց չինացի Շանշան Մենգը, որը մրցակցությունից դուրս էր: Երկամարտի նրա արդյունքը՝ 213 կգ (95+118) 27 կգ-ով գերազանցում է 2-րդ տեղը գրաված թաիլանդցի Սուկանյա Սրիսուրասի ցուցանիշը: Վերջինս էլ 17 կգ-ով առաջ անցավ Անի Սարգսյանից:

Մինչեւ 63 կգ քաշային աղջիկների մրցավեճում ուժեղագույնը ռուսաստանցի Դիանա Ախմետովան էր՝ 219 կգ (99+120): 2-րդ տեղը գրավեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Զոյա Սմիթը՝ 201 կգ (91+110): Բրոնզե մրցանակակիր դարձավ չինացի Լի Ջունը՝ 200 կգ (90+110):



# Հաղթական մեկնարկ

**Թենիսի Հայաստանի տղամարդկանց հավաքականը հաղթանակով սկսեց Սկոպիեում մեկնարկած Դեւիսի գավաթի մրցաշարը: Մեր թիմը, որ հանդես է գալիս եվրոպական գոտու 3-րդ խմբի C ենթախմբում, մեկնարկային խաղում 2-1 հաշվով առավելության հասավ վրացիների նկատմամբ: Վերջիններս առաջին խաղում 0-3 հաշվով զիջել էին Չեռնոգորիայի թիմին:**

**Հայաստանի հավաքականի հաղթանակում մեծ ներդրում ունեցավ էստոնացի թենիսիստ Դանիլ Պրոնկուրան: Նա առաջինը կորտ դուրս եկավ ու մենախաղում հաղթեց Գեորգի Ջիվաձեին (6-4, 0-6, 6-3): Իսկ վճռորոշ մենամարտում, երբ հաշիվը հավասարվել էր (Խաչատուր Խաչատրյանը 2-6, 0-6 հաշվով զիջել էր Ալեքսանդր Մետրեւելուն), Պրոնկուրան Խաչատրյանի հետ զույգ կազմելով, հաղթեց Ալեքսանդր Մետրեւելի-Գեորգի Ջիվաձե երկյակին՝ 6-3, 6-1:**

**Նշենք, որ նախկինում Դեւիսի գավաթի մրցաշարերում Հայաստանի հավաքականը 2 անգամ պարտվել էր վրացիներին: 1996-ին Թուրքիայում վրացիները հաղթել էին 2-1 հաշվով:**



**3 տարի անց պատմությունը կրկնվեց Էստոնիայում անցկացված մրցաշարում: Այնպես որ մեր թենիսիստները վրացիներից յուրօրինակ ռեւանշ վերցրին:**

# Երեք մրցանակակիր

**Սոֆիայում մեկնարկած սամբոյի Եվրոպայի առաջնության առաջին օրը հայ սամբիստներից երեքն արժանացան մեդալների: Բրոնզե պարգեւներ ստացան Ռուզաննա Սարգսյանը (48 կգ), Տիգրան Կիրակոսյանն (52 կգ) ու Աշոտ Դանիելյանը (74 կգ): Այսօր եւ վաղը մրցագորգ դուրս կգան մեր մյուս 5 մարզիկները:**

# Հաջող տուր

**Շախմատի Եվրոպայի կանանց անհատական առաջնության 7-րդ տուրը բավական հաջող էր հայ շախմատիստուհիների համար: Նրանցից 5-ը հաղթեցին, 3-ն իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոքի, պարտություն կրեց միայն Մարիա Գեւորգյանը: Լիլիթ Գալոյանը հաղթեց Եվա Մոզերին, Անահիտ Խառատյանը պարտության մատնեց Ալեքսանդրա Վախանիային, Լիա Մարտիրոսյանն առավելության հասավ Լիզի Տրապիձեի նկատմամբ: Անդրանիկ հաղթանակը տոնեց Սիրանուշ Ղուկասյանը՝ պարտության մատնելով Անժելիկա Ստոյանովիչին: Աննա Հայրապետյանն էլ հաղթեց Մայա Մումլաձեին:**

**Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Աննա Մուզիչուկի ու Նիգամի Կազիմովայի հետ: Կատարինա Սկրաբակովայի հետ պարտիայում կես միավոր վաստակեց Նելլի Աղինյանը:**

**Դանիելյանն ու Գալոյանը 5-ական միավորով առաջատարների խմբում են: Այդուսակը 6-ական միավորով գլխավորում են Վիկտորիա Չմիլիտեն ու Բելա Խոթենաշվիլին՝ հաղթելով համապատասխանաբար Մարինա Ռոմանկոյին ու Անտոանետա Ստեֆանովային:**

# Կրկին ոչ-ոքիներ

**Հավակնորդների մրցաշարի կիսաեզրափակիչ մրցախաղերի 2-րդ պարտիաներն էլ ոչ-ոքի ավարտ ունեցան: Կրամնիկն ու Գրիշչուկը հաշտություն կնքեցին 56-րդ քայլին, Գելֆանդն ու Կամսկին 10 քայլ ավելի կատարեցին: Երկու մրցախաղերում էլ հաշիվը հավասար է՝ 1-1: Այսօր կկայանա 3-րդ տուրը:**

# «Իմպուլսն» ու «Շիրակը» կմրցեն Աբովյանում

**Հանգստյան օրերին կկայանան ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի 9-րդ տուրի հանդիպումները: Մայիսի 15-ին կայանալիք «Իմպուլս»-«Շիրակ» հանդիպումն Իջեւանից տեղափոխվել է Աբովյանի «Կոտայք» մարզադաշտ: Պատճառն Իջեւանի «Արնար» մարզադաշտի անորակ խոտածածկն է:**

# Ֆուտբոլի կանոններում փոփոխություններ են սպասվում

**ՖԻՖԱ-ն պատրաստվում է որոշակի փոփոխություններ կատարել ֆուտբոլի կանոններում՝ խաղն ավելի դիտարժան դարձնելու նպատակով: Ստեղծվել է հատուկ հանձնախումբ Ֆրանց Բեկենբաուերի գլխավորությամբ, որի կազմում է նաեւ լեգենդար Պելեն, որի առաջին նիստում մասնավորապես քննարկվել են «խաղից դուրս» վիճակի արձանագրման համար կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները: Հանձնախումբն առաջարկել է ՖԻՖԱ-ին «խաղից դուրս» վիճակ չարձանագրել այն դեպքում, երբ հարձակվող ու պաշտպանվող ֆուտբոլիստները պայքարում են միմյանց հետ: Նման դեպքերում հաճախ հարձակվող ֆուտբոլիստը մարմնի մի ինչ-որ մասով առաջ է գտնվում պաշտպանից ու մրցավարները «խաղից դուրս» վիճակ են արձանագրում: Թեեւ ՖԻՖԱ-ն նման դեպքերում մրցավարներին վաղուց է խորհուրդ տվել որոշում կայացնել հօգուտ հարձակվող կողմի:**

**Մրցավարները հաճախ տուգանային հրապարակում խախտման համար հեռացնում են խաղադաշտից ու 11 մ հարված նշանակում, ֆուտբոլիստն էլ որակազրկվում է մեկ խաղով: Ստացվում է եռակի պատիժ: Հանձնախումբն առաջարկում է նման դեպքերում բավարարվել դեղին քարտով ու 11 մ հարվածով: Միայն բացառիկ դեպքերում է խորհուրդ տրվում ֆուտբոլիստին դաշտից հեռացնել: Բացի այդ, քննարկվում է կարմիր քարտի դեպքում մեկ խաղով որակազրկումը վերացնելու հնարավորությունը:**

**Նախատեսվում է 2012-ից կիրառել դարպասի գծի փաստն արձանագրելու համար հատուկ սարքավորումներ: Մինչեւ 17 տարեկանների մրցաշարերում առաջարկվում է լրացուցիչ ժամանակ չնշանակել, այլ միանգամից սկսել 11 մ հարվածաշարի իրացումը: Առաջարկվում է նաեւ լրացուցիչ ժամանակում թույլատրել 4-րդ փոխարինումը:**

**Բոլոր առաջարկները վերջնականապես քննարկման կդրվեն հունիսի 1-ին Ցյուրիխում կայանալիք ՖԻՖԱ-ի նստաշրջանում, որտեղ տեղի կունենան նաեւ նախագահի ընտրությունները:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

 www.azg.am www.azgdaily.com

## Օրվա հետքերով

# Տիգրան Սարգսյանը՝ 2010 թվականի բյուջեի կատարողականի եւ ՎՊ բացահայտումների մասին

*1-ին էջից*

Նա նշեց 2010-ի մակրոտնտեսական ցուցանիշները. «Համախառն ներքին արդյունքի աճը ծրագրված 1,2 տոկոսի փոխարեն կազմեց 2,1 տոկոս, ընդ որում՝ չափազանց կարեւոր է համախառն ներքին արդյունքի կառուցվածքը. մասնավորապես արդյունաբերությունում մենք արձանագրեցինք 10,5 տոկոս աճ, մշակվող արդյունաբերությունում՝ 13,6 տոկոս աճ, հանքարդյունաբերությունում՝ 19,1 տոկոս աճ»: Վարչապետի խոսքով՝ ծառայությունների ոլորտում ապահովվել է 4,5 տոկոս աճ, իսկ ընդհանրապես՝ մակրոտնտեսական ցուցանիշները կլինեին ավելի բարվոք, եւ ՀՆԱ-ի ցուցանիշը կլիներ կրկնակի բարձր, եթե գյուղատնտեսության ոլորտում աննախադեպ՝ 15,7 տոկոս անկում չլիներ, որը պայմանավորված էր, այլ հանգամանքներով, նաեւ բնակլիմայական պայմաններով: Առեւտրի հաշվեկշիռը շուրջ 1,3 տոկոսով բարելավվել է ի հաշիվ նրա, որ արտահանման տեմպերը գերազանցել են ներմուծման աճի տեմպերին, ինչպես նաեւ բարելավվել է ընթացիկ հաշիվը՝ 15,8 տոկոս ճեղքվածքից՝ հասնելով 13,9 տոկոսի, բարելավվել է նաեւ ընթացիկ հաշիվը՝ 16,8 տոկոսից ճեղքվածքը իջել է 14,7 տոկոսի: Այս դրական միտումները, ըստ վարչապետի, պետք է պահպանվեն մոտակա երեք տարիների ընթացքում, որպեսզի նաեւ բյուջեի պակասուրդը նվազի՝ հասնելով ծրագրային ցուցանիշներին: Բյուջեի դեֆիցիտը 7,7 տոկոսային կետից 2010 թվականին էապես նվազել է եւ կազմել է 5 տոկոս:

2010 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են 780 մլրդ դրամ, ինչը գերազանցում է 2009 թվականի ցուցանիշը 13 %-ով, իսկ ծախսային մասը գերազանցել է 2009 թվականի նույնանուն ցուցանիշը մոտ 3%-ով. 2009-ին պետբյուջեի ծախսերը ֆինանսավորելու համար աննախադեպ մեծ ծավալի պարտքեր են ներգրավվել, իսկ 2010թ. արդեն հիմնականում ծախսերը կատարվել են եկամուտների հաշվին, եւ բյուջեի դեֆիցիտի կրճատման պայմաններում՝ շուրջ 3 տոկոսով ավելացվել են ծախսերը:

2010 թվականի վերջին գնաճի մակարդակը կազմել է 9,4%, որի պայմանավորող հիմնական գործոնները երկուսն են՝ հիմնական պարենային եւ հումքային ապրանքների միջազգային գների բարձրացումը եւ նախորդ տարի գյուղատնտեսական ապրանքների առաջարկի աննախադեպ անկման հետեւանքով՝ վերջիններիս բարձր գների պայմանները: Նշված գնաճի 5 տոկոսային կետը եղել է ի հաշվի գյուղմթերքների գների աճի, իսկ 2,4 տոկոսային կետը՝ ներմուծվող ապրանքների գների աճի:

Այնուհետեւ վարչապետը կատարողական բազմաթիվ ոլորտային թվեր բերեց՝ նշելով նաեւ բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ եւ տնտեսության իրական հատվածում կատարված քայլերը: Իր ելույթի վերջում, կրկին անդրադառնալով ՎՊ մեկ օր առաջ ներկայացված հաշվետվությանը, հատկապես սոցիալական ոլորտի բացահայտումներին, վարչապետ Տիգրան Սարգսյանը նկատեց. «Նախագահի հանձնարարականի հիման վրա եւ դեռեւս 2010թ. մենք կայացրինք քաղաքական որոշում, որ սոցիալական ապահովության պետական ծառայության վճարման ծառայությունը պետք է լուծարենք, եւ այդտեղից էլ սկսվեց այս ամբողջ պատմությունը, երբ այդ լուծարման գործընթացում սկսվեցին փուլ առ փուլ բացահայտվել բոլոր կոռուպցիոն երեւույթները: Այդ կոռուպցիոն երեւույթները բացահայտվելու պարագայում՝ հանրապետության նախագահը հանձնարարական տվեց Վերահսկիչ պալատին եւ կառավարությանը՝ սկսել այս բնագավառում ստեղծված իրավիճակի լայնածավալ ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունները բացահայտեցին այդ երեւույթները», ասաց վարչապետը՝ նշելով, որ ՎՊ-ի բացահայտած ուղղություններով աշխատանքները շարունակվում է այսօր ֆինանսների նախարարության աուդիտը, Երեւան քաղաքի արդյունքները ամփոփված են եւ ներկայացված են դատախազություն՝ 500 էջից ավելի փաստաթղթերով. «Միեւնույն ժամանակ մենք 3 ամսվա ընթացքում պետք է ամփոփենք Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը»:

Եվ վերջում ավելացրեց. «Համենայն դեպս, մենք արձանագրում ենք, որ Վերահսկիչ պալատի ստուգումների արդյունքների հիման վրա ընդունված որոշումները Հայաստանի Հանրապետությունում էապես կրճատում են կոռուպցիոն ռիսկերը: Միեւնույն ժամանակ ուզում եմ նշել, որ, իհարկե, կան բազմաթիվ կետեր, որոնք վիճահարույց են, եւ մենք այդ բանավեճը շարունակում ենք Վերահսկիչ պալատի հետ, քանի որ դեռեւս գտնված չեն լուծումներ, որոնք կբավարարեն նաեւ գործադիր իշխանությանը՝ այս կամ այն գործառույթը կանոնակարգելու տեսակետից»:

**Մ. Խ.**

## ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) հրավիրում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիցենզավորված աուդիտորական կազմակերպությունների՝ իրականացնելու ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի աուդիտ՝ ԱՄՆ կառավարության ստանդարտներին (U.S. Government Auditing Standards) համապատասխան:

Մանրամասներին ծանոթանալու համար խնդրում ենք զանգահարել (010) 494452, (010) 494636, երկուշաբթի - ուրբաթ, ժ. 9:00-18:00:

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.vdv.am կայքում**

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «ԲԼԵՍՍ» ՈւՎԿ ՍՊԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը՝ 87,9 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ա. Սերոբի 2Ա շենք, բն. 75: Մեկնարկային գինը՝ 34300000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 17.06.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:




# ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ

### Վանի հերոսական ինքնապաշտպանության 96-ամյակի առթիվ

«Վասպուրական» հայրենակցական միությունը մայիսի 15-ին ժամը 12.00-ին, ի նշանավորումն 1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության 96-ամյակի, «Արծիվ Վասպուրականի» հուշարձանի մոտ (Արագածոտնի մարզի Ագարակ համայնքի հարեւանությամբ) կազմակերպում է ավանդական դաշտահանդես: Միության վարձակալած ավտոբուսները կշարժվեն Ստ. Շահումյանի անվ. հրապարակից ժամը 11.00-ին:

**«Վասպուրական» հայրենակցական միության վարչություն**

*Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը հորդորում է կուսակցության անդամներին մասնակցելու այս նախաձեռնությանը:*

Գրական-գեղարվեստական երեկո նվիրված

**Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության 85-ամյակին**

Կազմակերպությամբ՝
**1968 տարեշրջանի սաների**

*Բանախոսներ՝*
Գրող՝ **Կարպիս Սուրենյան**
Շրջանավարտ՝ **Բյուզանդ Ագբաշյան**
Երկարամյա ուսուցիչ՝ **Սեպուհ Աբգարյան**

*Հանդիսավար՝*
Հեռուստամեկնաբան
**Արթուր Բախտամյան**

*Ելույթ կունենա՝*
**Հայաստանի պետական կամերային երգչախումբը**

*Ղեկավարությամբ՝* **Ռոբերտ Մլքեյանի**

Տեղի կունենա Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը (Ավ. Իսահակյան, 1), չորեքշաբթի, մայիսի 18-ին, 2011թ., ժամը՝ 19:30-ին:
Վերջում հյուրասիրություն
*Մուտքն ազատ է*

*Այս հայտարարությունն ընդունել որպես անձնական հրավեր*

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01.01.2011 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ» ՊՈԱԿ | 10014470 |
| Փաստացի գործունեություն | Բարձրագույն բուհական եւ հետբուհական կրթություն | |
| հիմնական երկու տեսակները | Լրացուցիչ կրթություն | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 28621004777 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02527624 |
| Չափի միավորը | | հազար դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Տիգրան Մեծի 17 | 52.64.01 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երեւան Տիգրան Մեծի 17 | 52.67.91 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 3004092.0 | 3619488.0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 3004092.0 | 3619488.0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 108711.0 | 165161.0 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 10036.0 | 12942.0 |
| Արտադրանք | 130 | 505.0 | 505.0 |
| Ապրանքներ | 140 | 38915.0 | 47495.0 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 66994.0 | 18606.0 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 603337.0 | 699668.0 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 135334.0 | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | 3500.0 | 3500.0 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 239750.0 | 480264.0 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 4161.0 | 5866.0 |
| առ հաշիվ | 211 | 911.0 | 185.0 |
| ավանսային աշխատավարձ | 212 | 3250.0 | 5681.0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 1211243.0 | 1434007.0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 4215335.0 | 5053495.0 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| IIII. Սեփական կապիտալ | | | |
| Կուտակված շահույթ | 270 | 3395839.0 | 4054264.0 |
| Պահուստային կապիտալ | 280 | 215243.0 | 215243.0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 3611082.0 | 4269507.0 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | 103938.0 | 99763.0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 103938.0 | 99763.0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 7250.0 | 60824.0 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 426232.0 | 447996.0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 172.0 | 12916.0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական | 420 | 37527.0 | 39107.0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ | 430 | 14033.0 | 104297.0 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | - | 622.0 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 460 | 14743.0 | 17993.0 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 480 | 358.0 | 470.0 |
| | 481 | 289.0 | 173.0 |
| | 482 | - | 297.0 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 500315.0 | 684225.0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 4215335.0 | 5053495.0 |

***Ղեկավար*** ***Ռ. Միրզախանյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Ն. Աղաջանյան***
***Որակավորված հաշվապահ*** ***Կ. Մարության***
*Որակավորված հաշվապահի վկայական N0366*

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 3646849.0 | 3919511.2 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (2251488.0) | (2525285.3) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 1395361.0 | 1394225.9 |
| Վարչական ծախսեր | 050 | (451865.0) | (619615.2) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 943496.0 | 774610.7 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 99219.0 | 140248.0 |
| Ակտի գումար | 071 | 14328.0 | - |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (89609.0) | (81156.9) |
| Տույժ, տուգանք | 081 | 6843.0 | - |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 953106.0 | 833701.8 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 1566.0 | 423.3 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 954672.0 | 834125.1 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 954672.0 | 834125.1 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | 205683.0 | 175699.4 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 748989.0 | 658425.7 |

***Ղեկավար*** ***Ռ. Միրզախանյան***
***Գլխավոր հաշվապահ*** ***Ն. Աղաջանյան***
***Որակավորված հաշվապահ*** ***Կ. Մարության***
*Որակավորված հաշվապահի վկայական N0366*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: